



**NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN**

**DIRECTORY
OF INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN**

2025

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА**

**ВЕДОМОСТИ
ИНСТИТУТА ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА**

2025

**Yerevan 2026
Ереван 2026**

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐՔ
2025

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2026

ՀՏԴ 030:81

ԳՄԴ 92+81

Հ 247

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Կազմողներ՝ Վ. Կատվայան, Ն. Հովհաննիսյան, Գ. Մխիթարյան

Պատասխանատու խմբագիր՝ Ն. Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տեղեկա-
Հ 247 գիրք 2025.– Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն, 2026.–
217 էջ:

Տեղեկագիրքը ընդհանուր գծերով ներկայացնում է 2025 թ. ՀՀ ԳԱԱ
Հրայր Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական աշխատանք-
ները, աշխատակիցների հրապարակումների հիմնական բովանդակու-
թյունը և ձեռք բերված արդյունքները՝ ըստ հաստատության հիմնարար
գիտական հետազոտությունների ուղղությունների:

Գիրքը տեղեկատվական բնույթ ունի, նախատեսված է մասնագետնե-
րի, լեզվաբանությամբ հետաքրքրվողների, գիտական լայն հանրության
համար:

ՀՏԴ 030:81

ԳՄԴ 92+81

ISBN 978-9939-970-22-6

© ՀՀ ԳԱԱ, լեզվի ինստիտուտ, 2026

Երկու խոսք

Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ՀՀ ԳԱԱ կազմում հայերենագիտության ոլորտի գիտահետազոտական հաստատություն է, որը նաև կազմակերպում է հետբուհական կրթություն: Հայոց լեզվի ուսումնասիրությունը ընթանում է գիտական չորս ուղղություններով՝ ա) արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ, բ) հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր, գ) հայ բարբառների ուսումնասիրություն, դ) ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր: Ըստ այդմ՝ ինստիտուտի գործունեության հիմնական նպատակներն են հայոց լեզվի շարունակական և համակողմանի ուսումնասիրությունը, ընդհանուր, համեմատական և կիրառական լեզվաբանական հետազոտություններ ծավալելը, լեզվաքաղաքական ու լեզվամշակութային, գրական լեզվի կանոնարկման խնդիրներ արծարծելը և դրանց լուծմանը նպաստելը, ինչպես նաև գիտական կադրեր պատրաստելը:

Լեզվի ինստիտուտը տասնամյակներ շարունակ գիտական արժեքավոր բազում հետազոտություններով համալրել է հայերենագիտությունը, կիրառել լեզվաբանական հետազոտության նորագույն մեթոդներ, էական դերակատարում ունեցել հայերենագիտության և ընդհանրապես լեզվաբանության գիտակարգերի ուսումնասիրության մեջ, եղել հայերենագետներին և հայերենագիտական կենտրոնները համախմբող, լեզվի ուսումնասիրության խնդիրները համակարգող հաստատություն: Ինստիտուտը ձգտում է նպաստել հասարակության լեզվամշակութի մակարդակը բարձրացնելուն, լեզվի վերաբերյալ ճիշտ պատկերացումներ ձևավորելուն, մայրենին պահպանելուն և տարածելուն, լեզվաքաղաքական խնդիրներ լուծելուն:

Հայոց լեզվի ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետությունում գիտության գերակա ուղղություն է, իսկ ՀՀ ԳԱԱ Հ. Ա-

Ճառյանի անվան լեզվի ինստիտուտը երկրում հայերենի հետազոտությամբ զբաղվող հիմնական հաստատությունն է: Այսօր էլ ինստիտուտի գիտական արդյունքները կարևոր ներդրում են հայերենագիտության մեջ, դրանք նաև կարևոր նյութ և աղբյուր են օտար հայագետների, հնդեվրոպաբանների համար:

Լեզվի ինստիտուտը գիտական հանրությանը, կրթական ոլորտի աշխատողներին և սովորողներին, առհասարակ հաստատության գիտահետազոտական արդյունքներով հետաքրքրվողներին իր հրապարակած գիտական աշխատանքների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ տրամադրելու նպատակով շարունակում է «Տեղեկագրքի» ամենամյա հրապարակումը: Շարքի վեցերորդ հատորը ընդհանուր տեղեկություններ է պարունակում 2025 թվականին ինստիտուտի ձեռք բերած կարևորագույն, բազային և թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված, ինչպես նաև կիրառական աշխատանքների արդյունքների վերաբերյալ: Տրվում է 2025 թ. հրապարակումների ցանկը: Ըստ գիտահետազոտական աշխատանքների վերոհիշյալ չորս ուղղությունների՝ ներկայացվում են տարվա ընթացքում հրապարակված գրքերի և հոդվածների համառոտ ամփոփագրերը՝ նախ հայերեն, ապա անգլերեն և ռուսերեն: Հոդվածների օտարալեզու համառոտ ամփոփագրերը նույնությամբ արտատպվում են համապատասխան գիտական հանդեսներից:

«Տեղեկագրքի» հատորների բովանդակային և մատենագիտական տեղեկությունները կարևոր աղբյուր կծառայեն ինստիտուտի աշխատանքներին անդրադարձողների համար:

Կազմողներ

ՄԱՍ I

ՀՀ ԳԱՍ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2025 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ա. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Գ. Վ. Կատվայան) կարևորվել է հատկապես «Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս»-ի կազմման աշխատանքների սկսումը և Գեղարքունիքի մարզին նվիրված Ա. պրակի պատրաստումն ու հրատարակումը (հեղինակ՝ Վ. Կատվայան): Հայ իրականության մեջ առաջին անգամ լույս է տեսել տարածաշրջանային բարբառագիտական ատլաս՝ շուրջ 7 տասնյակ զուգաբանությունների ներառումով, 2 ընդհանուր բնույթի և 65 զուգաբանական քարտեզներով, մոտ ինը տասնյակ բնակավայրերի ընդգրկումով: Յուրաքանչյուր քարտեզ ունի մեկնաբանություններ, որոնք վերաբերում են զուգաբանությունների արտահայտությանը ինչպես ընդհանուր բարբառային հայերենում, այնպես էլ մարզի խոսվածքներում: Աշխատանքը երկլեզվյան է՝ հայերեն և անգլերեն, որը թույլ կտա նաև այլալեզու հետազոտողներին՝ ծանոթանալու ներկայացված նյութին և օգտվելու դրանից:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Գ. Մխիթարյան) ավարտվել է ««Հանդես բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններ (ԺԳ-ԺԸ դարեր)» աշխատանքը: Քննվել են Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող «Հանդես բանաստեղծաց» խորագրով միջնադարյան ձեռագիր բառարանների 63 գրչագիր տարբերակներ: Այդ բառարանները իրենց ստեղծման ժամանակի լեզվական վիճակը, մասնավորապես բառապաշարային իրողությունները հարազատորեն ներկայացնող արժեքավոր հավաքածուներ են, որոնց պարունակած

նյութը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել և բազմակողմանի (և՛ բանասիրական, և՛ լեզվաբանական հայեցակետերով) քննության ենթարկվել: Հայ մատենագրության բնագրային օրինակների համեմատությամբ մանրամասնորեն դիտարկվել են գրչագրերում առկա բառիմաստների փոփոխությունները, նորակազմությունները, առանձնացվում և քննվել են բարբառային իրողությունները, փոխառյալ բառերը, օտարաբառ կազմությունները:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ. Համբարձումյան) ավարտվել է «Անարկներ գրական հայերենի պատմության» մենագրությունը: Այն ընդգրկում է գրական հայերենի պատմության առանցքային հարցեր, որոնց լուծումն ունի կարևոր նշանակության ընդհանրապես մեր լեզվի և այն կրող հանրության պատմամշակութային ինքնատիպ առաջընթացի վերաբերյալ նոր և ավելի առարկայական պատկերացում ունենալու տեսանկյունից: Աշխատանքը բնագրագիտական-լեզվաբանական քննությունն է, որն առնչվում է գրավոր ժամանակաշրջանի հին, միջին և նոր շրջանների լեզվական ընտրված, մինչև օրս չուսումնասիրված նյութերին:

Բ. ԲԱԶԱՅԻՆ ՏԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՍԲ ՍՏԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ. Կատվայան) ավարտվել է «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը» թեմայի հետազոտությունը: Դիտարկվել և մեկնաբանվել են բառերի իրադրական տարբերակներ, պարսկական փոխառյալ բառակապակցություններ Ճահուկ-Վայքի միջբարբառում: Կատարվել են բարբառային բառերի ստուգաբանություններ: Քննության են ենթարկվել Կոզենի բարբառի բառապաշարի մի շարք առանձնահատկություններ, հինհայերենյան բառաշերտի որոշ բառանուններ: Դիտարկվել են Շիրակի խոսվածքի

բուսանուններն ըստ Ա. Մխիթարյանցի բառարանի: Ներկայացվել են Լոռու խոսվածքի բառապաշարի որոշ առանձնահատկություններ: Անդրադարձներ են կատարվել էպոսի պատումների լեզվին, դիտարկվել է բարբառային մի շարք իրողությունների արտահայտությունը դրանցում: Կատարվել է արևմտահայ խմբակցության բարբառային միավորներից մեկի՝ Ֆուռնոս Ուլնիայի խոսվածքի հնչյունաքերականական համակարգերի քննություն: Կազմվել է Ռշտունիքի բարբառային հայերենի ընդհանուր բնութագիրը: Դիտարկվել են Խոյի բարբառի գործածության յուրահատկությունները, ինչպես նաև Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառախմբերի բարբառամիջյան առնչությունները Նախիջևանի տարածքում: Քննվել է Արարատյան բարբառի և Լոռու խոսվածքի փոխհարաբերությունների հարցը: Համեմատվել են Արարատյան և Խոյ-Մարաղայի բարբառախմբերի անկատար ժամանակաձևերը, ձևավորվել է համեմատական բնութագիրը: Աշխատանքներ են ծավալվել Մշո և Սասունի բարբառների հնչյունական համակարգերի զուգադրահամեմատական քննության ուղղությամբ:

Քննվել են Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության ուղղությամբ 20-րդ դարում կատարված աշխատանքները, դիտարկվել են Ա. Ղարիբյանի, Ա. Գրիգորյանի, Գ. Ջահուկյանի, Ս. Աբրահամյանի, Կ. Դավթյանի, Ա. Պողոսյանի, Ա. Մարգարյանի կողմից բարբառի և նրա ենթաբարբառների հնչյունաբառաքերականական օրինաչափությունների հետազոտության հարցերը: Ներկայացվել են հայ եկեղեցու կողմից տարված աշխատանքները բարբառների պահպանման ու ուսումնասիրության ուղղությամբ:

Մուտքագրվել են երեք տասնյակ տետրերի քերականական զուգաբանություններին վերաբերող նյութեր: Ընթացել են բարբառային ձայնադարանի համալրման աշխատանքներ: Կատարվել են գիտարշավներ, դաշտային աշխատանքներ՝ բարբառային նոր նյութի հավաքման նպատակով:

Հետազոտությունների արդյունքները ամփոփվել են մեկ մեկնագրությունում և երկու տասնյակից ավելի հոդվածներում: Գի-

տաշափական բարձր վարկանիշ ունեցող և միջազգային շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակումները հինգն են:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Գ.Մխիթարյան) վեր են հանվել ու մեկնաբանվել լեզվի զարգացման տարբեր փուլերում հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի մի շարք փոփոխություններ և դրանց կատարման օրինաչափություններ: Կատարվել են գրաբարյան որոշ բառերի մեկնություններ, ստուգաբանություններ, ինչպես նաև XV դարի երկերում գործածված օտար ծագման բառերի դասակարգում և ուսումնասիրություն: Հետազոտվել են անտիպ ձեռագիր քերականությունները: Քննվել են «Հանդես բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանների (ԺԲ-ԺԶ դարեր) բառային տարբերակները և զուգաձևերը: Ամփոփվել է Գ. Տաթևացու երկերում առկա տերմինային բառերի ուսումնասիրությունը: Կատարվել է Ն. Շնորհալու հանելուկների լեզվական առանձնահատկությունների հետազոտություն: Ուսումնասիրվել են Աստվածաշնչյան դարձվածքները հունարենի և եբրայերենի համեմատությամբ:

Հետազոտությունների արդյունքները ամփոփվել են մեկ մեկնագրությունում և երկու տասնյակից ավելի հոդվածներում: Գիտաշափական բարձր վարկանիշ ունեցող և միջազգային շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակումները երկուսն են:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ. Համբարձումյան) ուսումնասիրություններ են կատարվել ընդհանուր ու կիրառական և համեմատական ու տիպաբանական լեզվաբանության ոլորտներում: Հետազոտական աշխատանքներ են ծավալվել թվային լեզվաբանության, մասնավորապես՝ լեզվաբանության տեսության և կադապարների ու արհեստական բանականության ուսում-

նասիրության ուղղությամբ: Շարունակվել է հայերենի և տարածաշրջանի մի շարք լեզուների համեմատական և տիպաբանական ուսումնասիրությունը: Կատարվել է հայերենի և թոխարական լեզուների համեմատություն: Քննվել են հայ-ալբանական բառային ընդհանրությունները, հնդեվրոպական նախաձևերի արտացոլման հնչյունական և իմաստային տարբերությունները: Ուսումնասիրվել է ապառնիության իմաստի քերականական արտահայտությունը ընդհանուր լեզվաբանության ու տիպաբանության դիտանկյունից հայերենի արևելյան խմբակցության բարբառներում: Հետազոտվել են հայերենում ռուսերենի միջնորդությամբ կատարված արաբական փոխառությունները: Կատարվել է հայերենի և տարածաշրջանի լեզուների համեմատական և տիպաբանական ուսումնասիրություն. երկնուլորտին առնչվող տերմինների ստուգաբանություն: Ուսումնասիրվում է հակադրության դրսևորումը լեզվում և հատկապես բառապաշարում: Ուսումնասիրվել են ներհականիչների տեսակները հայերենի բառապաշարում և առաջարկվել է դրանց հեղինակային դասակարգում:

Հետազոտությունների արդյունքները ամփոփվել են մեկ մենագրությունում և մեկ տասնյակից ավելի հոդվածներում: Գիտաչափական բարձր վարկանիշ ունեցող և միջազգային շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակումը մեկն է:

Գիրառական լեզվաբանության բնագավառում կատարվել է կիրառական և համակարգչային լեզվաբանական խնդիրների քննություն: Շարունակվել են հետազոտությունները հայերենի փորձառական հնչյունաբանության բնագավառում: Ուսումնասիրվել են հանրալեզվաբանության և հնչյունաբանության կապը, սոցիալական գործոնների ազդեցությունը հնչյունական փոփոխությունների վրա՝ պայմանավորված տարիքով և սեռով: Կատարվել է հայերենի և անգլերենի ձայնավորական համակարգերի քննություն: Աշխատանքներ են տարվել երկլեզվության, նյարդալեզվաբանության խնդիրների հետազոտության ուղղությամբ: Հետազոտվել է Լեզվական ցուցիչների և խոսքային հմտությունների դերը ա-

Ֆեկտիվ ու նյարդային խանգարումների ախտորոշման ու հաղթահարման գործում: Քննվել են իմաստների անհատական և հանրային ընկալման յուրահատկությունները արաբերենում և հայերենում: Մշակվել է միջգիտակարգային հետազոտական ծրագիր՝ «Տեղահանված բնակչության հոգեկան առողջության, հաղորդակցման հմտությունների և լեզվական ադապտացիայի գնահատում՝ բարբառի, սոցիալական ինտեգրման և վերականգնողական ռազմավարությունների վերլուծությամբ», որի իրականացումը արդեն սկսվել է նյարդահոգեբանական լաբորատորիայի գործունեության շրջանակում:

Հետազոտությունների արդյունքները ամփոփվել են մեկ մեկագրությունում և մեկ տասնյակից ավելի հոդվածներում:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Թ. Ասոյան) ուսումնասիրություններ են կատարվել հայերենի ոլորտային տերմինաբանության ուղղությամբ, քննվել են արդի հայերենի շարահյուսական առանձին կառույցներ: Ուսումնասիրվել են հայ լեզվաբանների անդրադարձները հայերենի բառակազմության տեսական խնդիրներին: Ուսումնասիրվել են լեզվի հարցերը XIX դարի պարբերական մամուլում: Հետազոտվել են հատկական փոխառությունները, հայերենի բժշկագիտական տերմինները, բառապաշարի շերտերի ոճական կիրառությունները, ռազմական ոլորտի բառերը գեղարվեստական գրականության մեջ: Կատարվել է «խաղ» և «պար» հասկացություններ նշող բառանվանումների քննություն, կազմվել է «Հագուստ» իմաստային դաշտի բառարան: Ուսումնասիրվել է ժամանակակից հայերենի բառակազմության ուսմունքը: Կատարվել է Արցախի տեղանունների լեզվաբանական քննություն, ուսումնասիրվում են տեղանունների անվանակոչման սկզբունքները, պայմանները և գործոնները: Հետազոտվել են Ղարաբաղի բարբառի ռուսերենից փոխառյալ բառերը: Քննվել են ժամանակակից հայերենի դարձվածային միավորների ձևաիմաս-

տային խմբերը, դիտարկվել են Ղարաբաղի բարբառի դարձվածա-
յին միավորների ուսուցման մեթոդական հնարները: Ուսումնա-
սիրվել են զուգաձևությունները ժամանակակից հայերենի ձևաբա-
նական համակարգում: Դիտարկվել են արդի հայերենի լեզվական
նորմի ճշգրտման հարցերը: Հետազոտվել է սփյուռքահայ հեղի-
նակների խոսքարվեստը: Քննվել են «մեղր» և «մեղու» բաղադրիչ-
ներով կազմությունները «Նոր բառեր» պրակաշարում: Կատարվել
է հայերենի «տալ» բայի իմաստագործառական քննություն: Ուսում-
նասիրվել է արհեստական բանականության տեխնոլոգիաների կիր-
առությունը բառարանագրության բնագավառում, մասնավորա-
պես՝ էլեկտրոնային բառարանագրության մեջ և բառիմաստի բա-
ցատրության գործընթացում:

Ուսումնասիրվել է բառակազմական պատճառաբանվածու-
թյունը արևմտահայերենում, կատարվել է բառապաշարի զուգադ-
րական քննություն: Քննվել են ներգործական բայերի խնդրառու-
թյան հիմնահարցերը: Դիտարկվել է արևմտահայերենի վիճակը
Հայաստանի Հանրապետությունում (21-րդ դար): Կատարվել է ոչ
նյութական խոսքի մասերի բառարանագրման առանձնահատ-
կությունների ուսումնասիրություն: Հետազոտվել են նաև օտարա-
բանությունների խնդիրները արդի արևմտահայերենում: Շարու-
նակվում են մշակվել արևմտահայերենի կանոնարկման և հատուկ
անունների տառադարձման սկզբունքները: Աշխատանքներ են
տարվում ուսումնասիրելու լեզուների վտանգվածության հարցը
հանրալեզվաբանական հայեցակետով: Հետազոտվում են թուրքե-
րեն-արևմտահայերեն երկլեզվության խնդիրները: Ուսումնասիր-
վում են պոլսահայ մամուլը և արդի հրապարակումները: Աշխա-
տանքներ են տարվում նաև լեզուների պահպանման միջազգային
փորձի ուսումնասիրության ուղղությամբ:

Հետազոտությունների արդյունքները ամփոփվել են մեկ մե-
նագրությունում, մեկ ժողովածուում և մեկ տասնյակից ավելի հոդ-
վածներում:

Գ. ԹԵՄԱՏԻԿ ՖԻԼԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՍՏԱՅՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Լոռու մարզի բարբառային համապատկեր» թեմատիկ ծրագրով (ղեկ.՝ Բ.Գ.Պ. Վ. Կատվալյան) կատարվել են գիտարշավներ Լոռու մարզ, շուրջ 3 տասնյակ բնակավայրերից հավաքվել է ուսումնասիրության համար անհրաժեշտ նյութ: Դիտարկվել են ինչպես խոսվածքի ընդհանուր առանձնահատկություններ, այնպես էլ առանձին բնակավայրերին բնորոշ հետաքրքրական հնչյունաքերականական հատկանիշներ, բառակազմական և բառիմաստային յուրօրինակություններ: Աշխատանքների ավարտին որոշվել են մարզում գործածվող բարբառների ընդգրկման սահմանները, ընդհանուր գծերով նկարագրվել են այդ միավորները և խմբավորվել մարզում դրանց դրսևորումները:

«Գորիսի տարածաշրջանի բարբառը, բանահյուսությունը, տեղանունները, տոհմանունները» ծրագրով (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Ս. Քուսմունց) բարբառային, բանահյուսական, ազգագրական, պատմական, հնագիտական ուսումնասիրություններ են կատարվել Սյունիքի մարզում:

«Հայերեն լեզվամտածողության ձևավորման գնահատման հոգեչափական փաթեթի ստեղծում» ծրագրով (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Ս. Հովհաննիսյան) մշակվել է թեսթի առաջին մակարդակի փորձնական տարբերակը:

Դ. ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Թ. Ասոյան) հրապարակվել է «Նոր բառեր»-ի Թ պրակը, որում արձանագրված են բացատրական և նորաբանությունների բառարաններում չվկայված բառեր:

Հրապարակվել է «Ընդհանուր լեզվաբանություն. գործնական աշխատանքների ձեռնարկ»-ը, որը միտված է նպաստելու ուսանողների ինքնուրույն աշխատանք կատարելուն, նրանց գործնական հմտությունների զարգացմանը: Ձեռնարկը կարող է օգտակար լինել ընդհանուր և հայ լեզվաբանությամբ հետաքրքրվողների համար:

Հրապարակվել է «Արդի հայերենի բառագիտության, քերականության և ոճագիտության հարցեր» աշխատանքը՝ նվիրված արդի հայերենի կանոնարկման խնդիրներին, ոճական առանձնահատկություններին:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ. Համբարձումյան) մշակվել և կազմակերպվել է «Ենթագիտակցությունից լեզվագիտակցություն և հաղորդակցում. եռափուլ լաբորիթոս» գիտագործնական մոդելը, որը ներկայացվել է «Հոգեբանական վերնիսաժ. Expo-25» միջոցառմանը: Մոդելը հնարավորություն է ընձեռել ստանալու բազմաբնույթ դիտարկումներ՝ լեզվամտածողության, ներքին հաղորդակցական դինամիկայի և ընկալողական գործընթացների իրազեկման առնչությամբ:

Լեզվի ինստիտուտի և ԵՊՀ հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի գործակցությամբ հրապարակվել է «Հեքիաթի հոգելեզվաբանական կիրառությունը» գիրքը, որում ներկայացված են հեքիաթաթերապիայի վերաբերյալ հոգելեզվաբանական և ստեղծագործական հոգեբանության մոտեցումները, հեքիաթի միջոցով իրականացվող հոգեբանական աշխատանքի բնույթն ու առանցքային կողմերը:

Հրապարակվել է «ՀՀ ԳԱԱ ԼԻ Տեղեկագիրք 2024» գիրքը, որը ներկայացնում է 2024 թ. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցների հրապարակած գիտական աշխատանքների մատենագիտական ցանկերը և հրապարակումների համառոտ բովանդակությունը (հայերեն, անգլերեն, ռուսերեն):

2025թ. ընթացքում լեզվի ինստիտուտի գիտաշխատողների կատարած հետազոտությունների արդյունքները հրապարակվել

են 13 գրքերում և ժողովածուներում, մոտ 90 հոդվածներում: Ընդ որում՝ 8 հոդված հրապարակվել է ՄԳՇ-ի հանդեսներում: ՄԳՇ հանդեսներում ընդունվել են հրապարակման 15 հոդվածներ, մոտ երկու տասնյակ հոդված ուղարկված է հրապարակման տեղական հանդեսներում:

**Ե. ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ
ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ, ԲԱՌԱՐԱՆՆԵՐ**

1. «Լեզու և լեզվաբանություն», 1(32), Ե., ԼԻ հրատ., 2025, 110 էջ:
2. «Լեզու և լեզվաբանություն», 2(33), Ե., ԼԻ հրատ., 2025, 99 էջ:
3. Նոր բառեր, Թ պրակ, ԼԻ հրատ., 2025, 159 էջ:
4. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2024, Ե., ԼԻ հրատ., 2025, 239 էջ:

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ**

- 1.«Բառագիտության արդի խնդիրներ. Հանրապետական գիտա-
ժողովի նյութեր», Ե., ԼԻ հրատ., 2025, 136 էջ:
https://language.sci.am/sites/default/files/barhagitowtyan_ardi_khndirner_gitazhoghov_2025-21.11.pdf
2. «Գրական հայերենը ԶԼՄ-ներում (միջոցառման նյութեր)», Ե.,
ԳԱԱ ԼԻ հրատ., 2025, 67 էջ:
https://language.sci.am/sites/default/files/grakan_hayerene_zlm-nerowm.pdf
3. Կատվայան Վ.Լ., Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս.
պրակ Ա., Գեղարքունիքի մարզ, Ե., ԼԻ հրատ., 2025, 325 էջ:
https://language.sci.am/sites/default/files/hayots_lezvi_barbarhagitakan_atlas_gegharkowniki_marz.pdf
4. «Կիրառական լեզվաբանության հարցեր», պրակ Գ, Ե., ԼԻ
հրատ., 2025, 185 էջ:

- https://language.sci.am/sites/default/files/kirarhakan_levabanowtyan_hartserprak_g.pdf.pdf
5. Ներսիսյան Վ.Ա., Արդի հայերենի բառազիտության, քերականության և ռճազիտության հարցեր, Ե., ԼԻ հրատ., 2025, 132 էջ:
https://language.sci.am/sites/default/files/v._nersisyan_ardi_hayereni_barthagitolowtyan_kerakanowtyan_ew_ochagitolowtyan_hartser.pdf.pdf
6. «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (22), Ե., ԼԻ հրատ., 2025, 147 էջ:
https://language.sci.am/sites/default/files/jahowkyanakan_entertsowmner_2025_21.pdf
7. Սարգսյան Մ.Ա., Միքայելյան Ս.Ա., Բաղդամյան Ս.Ե., Խաչիբաբյան Ն.Պ., Հայերենը որպես սփյուռքի լեզու և օտար լեզու. Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի օրինակը, Ե., ԱԻԿԱ-Արմենիա. Ժամանակակից արվեստի ինստիտուտ, 2025, 122 էջ:
<https://aica-armenia.com/index.php/aica/catalog/view/4/4/102>
8. Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2025, 259 էջ:
https://language.sci.am/sites/default/files/sergey_abrahamyani_tsnndyan_100-amyakin_0.pdf

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

1. Հովհաննիսյան Ս.Գ., Սարգսյան Դ. Յու., Հեքիաթի հոգելեզվաբանական կիրառությունը, Ե., «ՎԻՎԻԷՄ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատ., 2025, 152 էջ:
2. Ղազարյան Հ.Ս., Ընդհանուր լեզվաբանություն. գործնական աշխատանքների ձեռնարկ, Ե., ԼԻ հրատ., 2025, 209 էջ:

**ԳՐԱԽՈՍՎՈՂ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ՈՒ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ
ԳՐԱԽՈՍՎՈՂ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ
ՏՊԱԳՐՎԱԾ ՀՈՐՎԱԾՆԵՐ**

1. Առաքելյան Կ., Ջրի և ոռոգման գեղարվեստական պատկերը Միսսաք Մեծարենցի լեզվով, «Էջմիածին», Թ, 2025, էջ 120-128:
2. Բարսեղյան Ա.Գ., Խնդրառություն կապակցության եղանակի ընդհանուր բնութագիրը արդի գեղարվեստական արձակում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Ե., 19, 2025, էջ 345-351:
3. Բարսեղյան Ա.Գ., Շարահյուսական կապակցման եղանակների ընդհանուր բնութագիրը Ե., ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 20, 2025, էջ 427-436:
4. Գևորգյան Գ.Գ., Կապային կառույցների հոմանիշ ձևեր արդի հայերենում, Ե., Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի «Միջազգային 18-րդ տարեկան գիտաժողով», մաս II, 2025, էջ 662-670:
5. Դալալյան Տ.Ս., Վիպաբանական ընդհանուր սխեմաները հայկական և օսական էպոսներում, «Պատմաբանասիրական հանդես», 2025, 2 (229), էջ 137-156:
6. Կատվալյան Վ.Լ., Լոռու խոսվածքին հատուկ որոշ բառերի մասին (համեմատական վերլուծություն), «Պատմաբանասիրական հանդես», 2025, 2 (229), էջ 209-225:
7. Համբարձումյան Վ.Գ., Արսեն Այտընյան. Ականավոր լեզվաբանը, հայերենագետը (ծննդյան 200-ամյակի առթիվ) // «Գիտության աշխարհում», 2025, 4, էջ 16- 21:
8. Հովհաննիսյան Ն.Գ., Բարբառային բառերի հավելումներ «Հանդես բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններում (XIV, XVI, XVIII դարեր), «Լրաբեր հասարակական գիտությունների», 3, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2025, էջ 148-160:
9. Յովհաննիսեան Ն., Նորակազմ բառեր «Հանդես բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններում (ԺԲ.-ԺԴ., ԺԷ., ԺԸ. դարեր), Վիեննա, «Հանդես ամսօրեայ», թիւ 1-12, 2025, էջ 94-114:

10. Հովհաննիսյան Ս.Գ., Գիտություն. հանրամատչելիացում, հանրայնացում, հանրահռչակում, զարգացում (հոդվածների ժողովածու), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2025, էջ 146-153:
11. Ղամոյան Լ. Ա., «Ուար» հասկացությունը և նրա բառակազմական առանձնահատկությունները գրական հայերենում», Բանբեր Երևանի համալսարանի, հտ. 16, հ. 3 (48), 2025, էջ 119-127:
12. Մեսրոպյան Հ. Հ., Արևմտահայ բարբառները հայ եկեղեցու հովանու ներքոյ. Գարեգին Սրուանձտեանց, «Հայոց եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2025, էջ 163-177:
13. Մեսրոպյան Հ. Հ., Համբարձումյան Ս. Վ., Շիրակի խոսվածքի բուսանուններն ըստ Ա. Մխիթարյանցի բառարանի, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 12-րդ գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2025, էջ 290-295:
14. Մեսրոպյան Հ. Հ., Լեզուական դիտարկումներ հայոց դիւցազնավեպի շուրջ, «Հասկ» հայագիտական տարեգիրք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Անթիլիաս-Լիբանան, 2025, էջ 567-579:
15. Մեսրոպեան Հ. Յ., Պօղոսեան Ա. Կ., Սասնայ ծոեր հերոսավեպը և բարբառագիտական տառադարձութեան նորագոյն միջոցների կիրառման անհրաժեշտութիւնը պատումները վերահրատարակելիս, «Գիրք» հրատ., Լոս Անջելէս-Երևան, 2025, էջ 158-171:
16. Մեսրոպեան Հ. Յ., Հայ ժողովրդի բռնի տեղահանութիւնները լեզուամշակութային արժեքների խաթարման պատճառ, «Հայութեան տեղաշարժերը և փոխակերպումները 20րդ դարուն և 21րդ դարու սկիզբին», «Լուսակն», Բէյրութ, 2025, էջ 37-46:
17. Մեսրոպեան Հ. Յ., Պօղոսեան Ա. Կ., Լեզուական դիտարկումներ հայոց դիւցազնավեպի շուրջ, «Հասկ» հայագիտական տարեգիրք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Անթիլիաս, Լիբանան, 2025, էջ 567-579:
18. Մեսրոպյան Հ. Հ., Հայ-ռուս-վրաց- քուրդ լեզվամշակույթը Հովսեփ Օրբելու բարբառային հետազոտություններում, Армяно-

- русско-грузино-курдский языки и культура в диалектологических исследованиях Овсепа Орбели, «Арменоведение в контексте языков и культур», сборник научных статей, издательство «Московский государственный лингвистический университет», Москва, 2025, էջ 112-121.
19. Մկրտչյան Մ.Ս., Ներհականիշությունը հայերենի բառապաշարում, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», Ե., հատ. 16, թիվ 2 (47), էջ 72-88:
 20. Մկրտչյան Մ.Ս., Հիշողությունն իբրև մշակութային հիշողություն ձևավորող գործոն. նշանագիտական մոտեցում, Բանբեր Բրյուսովի անվ. պետական համալսարանի. լեզվաբանություն և բանասիրություն, 1 (72), Ե., էջ 72-88:
 21. Մովսեսյան Ռ.Ա., Ղարաբաղի բարբառի դարձվածքների ուսուցումը, «Գիտական Արցախ», 1, Ե., 2025, էջ 108-120:
 22. Ներսիսյան Վ.Ա., Ղալակյան Ռ.Ա., Բառապաշարի լեզվաոճական առանձնահատկությունները Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 20, Ե., 2025, էջ 327-338:
 23. Սարգսյան Ա. Յու., Մինասյան Շ.Մ., Արցախի (Ղարաբաղի) բարբառը և բանահյուսությունը XIX դարի սկզբնաղբյուրներում և ուսումնասիրություններում, 1, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2025, 128-142:
 24. Սարգսյան Ա., Մինասյան Շ., Արցախի ազգագրությունը, բանահյուսությունը և բարբառը XIX դարի երկրորդ կեսի ռուսական հրատարակություններում, «Վէմ», 4, Ե., 2025, էջ 224-244:
 25. Վարդանյան Ա.Վ., Ճահուկ-Վայքի միջբարբառը վիմագրերում, որմնանկարների մակագրութիւններում եւ ձեռագրերի յիշատակարաններում, «Հանդէս ամսօրեայ», 1-12, Վիեննա, 2025, էջ 115-122:
 26. Քումունց Մ.Ս., Լավրենտի Հովհաննիսյան, «Ղարաբաղի (Արցախի) բարբառի հնաբանությունները» (գրախոսություն), «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, 2025, էջ 282-288:

27. Քուճուճ Մ., Գորիսի բարբառի սոսիալնոմինյերը, «Арменоведение в контексте языков и культур: сборник научных статей II Международной научно-практической конференции, г. Москва, 18–19 апреля 2023 года / ответственный редактор А. Ж. Мартиросян, ред коллегия: Н. С. Шаталова, Г. А. Акобджанян, Ж. С. Хулхачиева и др. », Մուկլիշ, 2025, էջ 77-90:
28. Асоян Т.А., Папикян С.В., Вербальная агрессия в армянских и русских средствах массовой информации, Сборник научных статей Гаварского государственного университета, 19, 2025, ст. 365-374.
29. Асоян Т.А., О лексикографической деятельности Мхитаристов, Арменоведение в контексте языков и культур, Сборник научных статей 2-ой международной научно-практической конференции, Москва, 2025, ст. 36-44.
30. Варданян А.В., Хранитель армянского Великого поста и шумерский Хумбаба, "Религиоведение", N 3, Благовещенск, 2025, с. 59-65.
31. Далалян Т.С., Общая характеристика фольклорных материалов в Эминском этнографическом сборнике, "Культурное наследие Российской и Ново-Нахичеванской епархии Армянской Апостольской Церкви. 1717–2025", Санкт-Петербург, Материалы международной конференции по арменоведению, 2025, с. 132-138.
32. Месропян А.О., Роль епархии российских армян в развитии армянской диалектологии, "Культурное наследие Российской и Ново-Нахичеванской епархии Армянской Апостольской Церкви. 1717 – 2025", Санкт-Петербург, Материалы международной конференции по арменоведению, 2025, с. 17- 23.
33. Тигранян С. Т., Критика деятельности Фатимидских халифов и отражение религиозных положений в учении Ибн Таймийи, Вестник Российско-Армянского (Славянского) университета" (серия: гуманитарные и общественные науки), N 3, 2025, с. 178-190.
34. Avetyan S.R., Several Different Origins of the Մ /Ա/ Vowel-Final Imperative of Simple Verbs in the Է/Դ /Ե/Ի/ Conjugation in Modern Armenian Dialects, Yerevan, "Bulletin of Yerevan University. Philology", Vol. 16, N 1 (46), 2025, p. 57-72.
35. Avetyan S.R., A morphosyntactic analysis of Latin multi-word anatomical terms and their translation equivalents in English and Armenian,

-
- "Hermēneus". Spain, *Revista de Traducción e Interpretación*, 2025, vol. 27, p. 97-125.
36. Firyan A., Anomic Trends in Business Ethics and Leadership Research in Changing Society, *Business Ethics and Leadership*, 9(4), 163-179, 2025 ISSN (online) – 2520-6311; ISSN (print) – 2520-6761, Published: 31 December 2025, Publisher: Academic Research and Publishing UG (i.G.) (Germany).
37. Katvalyan V.L., Khachatryan H.R., Barnasyan J.A., Gharibyan A.A., Hodgson C., Kumunts M.S., Domestic Animals in Armenian Proverbs: A Cognitive Approach, Saint-Petersburg, "Etnografia", N 3, 2025, p. 162-185.
38. Katvalyan V.L., Gharibyan A.A., Hovhannisyan N.G., Mkhitaryan G. M., Analysis of Gender Differences in the Vocabulary of Dialectal Armenian, Barcelona, "Dialectologia" N 35, 2025, p. 109-131.
39. Katvaljan V.L., Gharibyan A.A., Hovhannisyan N.G., Vardanyan A.V., Mkhitaryan G.M., Rivola's Baragirk'Hayoc'. Dictionarium Armeno-Latinum (1621): An Analysis of Vocabulary Related to Nations and Countries in the First Printed Armenian Dictionary, Toronto, "Lexocography", vol. 12, iss. 2, 2025, p. 53-73.
40. Kumunts M.S., Margaryn I.A., Miqayelyan S.A., Khachatryan V.M., Gevorgyan G.G., Khachatryan H.R., Grigoryan S.M., Nersisyan L., Indo-European origins of Syunik-Artsakh Agricultural Terms, Singapore, "Forum for Linguistic Studies", vol. 7, iss. 5, 2025, p. 535-548.
41. Mkhitaryan G.M., Dilbaryan N.H., Religious Terms in Classical Armenian Based on the Book "Refutation of the Sects" by Yeznik Koghbatsi, Singapore, "Forum for Linguistic Studies." 2025, 7(3), p. 1038–1046.
42. Mkrtchyan M.S., Book Cover as a Semiotic Translation: The Case of the Autobiography Mayrig by Henri Verneuil, Tomsk, ПРАΞΗΜΑ. Journal of Visual Semiotics, 2025, iss. 4 (46), p. 122-141.
43. Tadevosyan H.M., Khachatryan V.M., Lexical Analysis of Disease Names Based on Zoonyms in Medieval Armenian Medical Books, Trnava, "Lege artis. Language Yesterday, Today, Tomorrow", vol. X, N 2, 2025, p. 149-166.
44. Tigranyan S., The debates around the createdness of the Qur'an: Ibn Taymiyyah's approach, Bulletin of the Institute of Oriental Studies, Vol. 5 No. 1, 2025, NAS RA, p. 14-27.

***Հոդվածները հրատարակվել են «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսում, 1 (32), Ե., ԼԻ հրատ., 2025, 110 էջ:**

https://language.sci.am/sites/default/files/languageAndLinguistics/lezow_ew_lezvabanowtyown132_2025.pdf

1. Մեսրոպյան Հ.Հ., Ռշտունիքի բարբառային հայերենի ընդհանուր բնութագիրը (Ըստ Ռշտունցիների պատմած ժողովրդական հեքիաթների), էջ 17-35:
2. Ներսիսյան Վ.Ա., Բառակազմության տեսական և մանկավարժական հարցերի քննությունը Արարատ Ղարիբյանի աշխատություններում, էջ 36-50:
3. Թադևոսյան Հ.Ս., Բառերի նոր իմաստային կիրառություններ հայ միջնադարյան բժշկարաններում (Գրիգորիս, «Քննութիւն նարդոյ եւ նորին ցաւոց», «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ»), էջ 51-62:
4. Մարգարյան Լ.Գ., Արցախի բնակավայրերի / չ վերջնահնչյուն քաղաղրիչով անվանումների քննություն, էջ 63-79:
5. Խաչատրյան Վ.Ս., Կարևոր ներդրում Հ. Շիրազի լեզվի բառապաշարի ուսումնասիրության մեջ (գրախոսություն), էջ 96-99:

***Հոդվածները հրատարակվել են «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսում, 2 (33), Ե., ԼԻ հրատ., 2025, 99 էջ:**

https://language.sci.am/sites/default/files/languageAndLinguistics/lezow_ew_lezvabanowtyown233_2025.pdf

1. Համբարձումյան Վ.Գ., Ստուգաբանական դիտարկումներ, էջ 57-67:
2. Միքայելյան Ս. Ա., Հայերենում ռուսերենի միջնորդությամբ կատարված արաբական փոխառություններ, էջ 15-25:
3. Պապիկյան Ս.Վ., «Բնակավայր, կացարան» իմաստային խմբի որոշ հատկական փոխառությունների քննություն, էջ 77-85:
4. Մարգարյան Ա. Յու., Մինասյան Շ.Ս., Ալթունյան Է.Ռ., Սերգեյ Արահամյանի բարբառագիտական ներդրումը, էջ 3-14:

5. Սիրունյան Տ. Ղ., «Քերականութիւն է Ը մասանց բանի» (ԺԷ դար).
բնույթը և աղբյուրները, էջ 26-46:

***Հոդվածները հրատարակվել են «Ջահուկյանական ընթերցումներ»
գիտական հանդեսում, 1 (22), Ե., ԼԻ հրատ., 2025, 147 էջ:**

https://language.sci.am/sites/default/files/jahowkyanakan_entertsowmer_2025_21.pdf

1. Խաչատրյան Հ.Ռ., Դիտարկումներ Կոզենի բարբառի բառապաշարի շուրջ, էջ 13-28:
2. Կատվայան Վ.Լ., Լոռու խոսվածքի և Արարատյան բարբառի առնչությունների շուրջ, էջ 29-47:
3. Վարդանյան Ա.Վ., Պարսկերենից փոխառյալ բառակապակցություններ Ճահուկ-Վայքի միջբարբառում, էջ 81-92:
4. Ֆիշենկճեան Ա.Ա., Ներգործական բայերու խնդրառության հիմնահարցերը հայերենի մէջ (արեւելահայերէն-արեւմտահայերէն), էջ 93-106:
5. Մկրտչյան Գ.Գ., **Խառատյան Մ.Հ.**, Լեզվական նորմը և միջին հայերենը, էջ 125-143.

***Հոդվածները հրատարակվել են «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԼԻ հրատ., 2025, 136 էջ:**

https://language.sci.am/sites/default/files/barhagitowtyan_ardi_khndirner_gitazhoghov_2025-21.11.pdf

1. Գալստյան Ա.Ս., Թեյան Լ.Գ., Հայերենի *տալ* բայի իմաստագործառական քննություն, էջ 4-7:
2. Առաքելյան Կ.Լ., Նորակազմ բառեր արդի հայ քնարերգության մեջ, էջ 8-12:
3. Գրիգորյան Գ.Գ., Բարևելու ժեստերի փոփոխությունը Կովիդ-19-ի (COVID-19) ժամանակաշրջանում. հանրամշակութային վերլու-

ծություն, էջ 13-21:

4. Հակոբյան Ֆ.Ա., Արհեստական բանականության համակարգերի դերը բառիմաստի բացատրության գործընթացում, էջ 22-27:

5. Հակոբյան Ֆ.Ա., Արհեստական բանականության տեխնոլոգիաների կիրառությունը էլեկտրոնային բառարանագրության մեջ, էջ 28-34:

6. Ղազարյան Հ.Ս., Տարածք երկրորդական ձևայինները ժամանակակից հայերենում, էջ 58-68:

7. Ղամոյան Լ.Ա., «Խաղ» արմատի բառակազմական և իմաստային առանձնահատկությունները, էջ 69-80:

8. Պապիկյան Ս.Վ., Դիտարկումներ «Հատկական փոխառություն» տերմինի մասին, էջ 89-95:

9. Տելեքյան Մ.Հ., Բառերի բացատրության բացասական կամ ժխտական եղանակը հայերենի բառարաններում, էջ 96-100:

10. Խաչատրյան Վ.Ս., Բազմիմաստության և համանունության շփոթության հարցի շուրջ, էջ 109-121:

11. Մարգարյան Ի.Ա., Համանուն և հարանուն բաղադրիչներով կազմություններն արդի հայերենում, էջ 122-134:

***Հոդվածները հրապարակվել են «Գրական հայերենը ԶԼՄ-ներում». Մայրենիի օրվան նվիրված միջոցառման նյութերում, Ե., ԼԻ հրատ, 2025, 67 էջ:**

https://language.sci.am/sites/default/files/grakan_hayerene_zlm-nerowm.pdf

1. Առաքելյան Կ.Լ., «Հրապարակ» օրաթերթի լեզվի մասին, էջ 4-8:

2. Բարսեղյան Ա.Գ., Հեռուստատեսության լեզուն Հ 1 և 1լուրեր.ամ (<https://www.1lurer.am/>) էջ 9--12:

3. Թելյան Լ.Գ., Լեզվական նորմից շեղումներ զանգվածային տեղեկատվության լեզվում, էջ 13-19:

4. Խաչատրյան Ն.Գ., Հ 2-ի «Լրաբեր» հաղորդաշարի լեզվական վերլուծություն, էջ 20-29:

5. Ղազարյան Հ.Ս., Լեզվական շեղումներ («5-րդ ալիք» հեռուստա-
ընկերություն), էջ 30-36:
6. Ղամոյան Լ.Ա., Անադարտ պահենք մեր մայրենին, էջ 37-43:
7. Մարգարյան Լ.Գ., Հաղորդում Մայրենիի տոնի առիթով, էջ 44-46:
8. Մովսիսյան Ռ.Ա., Լեզվական սխալներ լրատվական կայքէջերից,
էջ 47-53:
9. Ներսիսյան Վ.Ա., Դիտարկումներ լրատվամիջոցներում հայերե-
նի գործածության վերաբերյալ, էջ 54-59:
10. Պապիկյան Ս.Վ., «Ժողովուրդ» օրաթերթի լեզվի մասին, էջ 60-
65:

***Հոդվածները հրապարակվել են Սերգեյ Աբրահամյանի ծննդյան
100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողո-
վածուում, Ե., ԼԻ հրատ., 2025, 259 էջ:**

https://language.sci.am/sites/default/files/sergey_abrahamyani_tsnndyan_100-amyakin_0.pdf

1. Գրիգորյան Ս.Ս., Հինհայերենյան մի քանի բառերի իմաստափո-
խության մասին, էջ 51-58:
2. Թեյլան Լ.Գ., Բարդ նախադասության տեսության հարցերը Ս.
Աբրահամյանի աշխատություններում, էջ 81-90:
3. Ղազարյան Հ.Ս., Հնչերանգը և տրոհումը տարածք շարահյու-
սական կառույցների տարբերակման միջոց, էջ 114-125:
4. Մարգարյան Լ.Գ., -*Կերտ*, -*ստան* և -*ավան* ձևույթների իմաստա-
գործառական արժեքը Արցախի բնականումներում, էջ 168-178:
5. Մկրտումյան Ա.Ա., *Մեղր* և *մեղու* բառերը և դրանցով կազմույթ-
յունների իմաստային (թեմատիկ) դասակարգումը հայերենում,
էջ 213-225:
6. Ներսիսյան Վ.Ա., Բառակազմության տեսական հարցերի քննու-
թյունը Ս. Աբրահամյանի աշխատություններում, էջ 226-238:
7. Վարդանյան Ա.Վ., Բառերի իրադրական տարբերակները ճա-
հուկ-Վայքի միջբարբառում, էջ 252-256:

***Հոդվածները հրապարակվել են «Հայ բանասիրութեան հեռանկարներ. ուսումնասիրութեան ու ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Լոս Անջելես-Երևան, N 1, ԱՄՆ Արեւմտեան թեմի հրատ., 2025, 247 էջ:**

<https://api.nla.am/server/api/core/bitstreams/f58c2fc6-bff6-43ee-ad97-0a6eb06e4367/content>

1. Համբարձումյան Վ.Գ., Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրությունների խնդիրները լեզվի պատմության համատեքստում, էջ 20-31:
2. Սարգսյան Ա. Յու., Մինասյան Շ.Մ., Ղարաբաղի բարբառ. արդի վիճակը և պահպանման հեռանկարները, էջ 57-71:
3. Սարգսյան Մ.Ա., Թվային հայագիտությունը որպես նոր ուղղություն. Խնդիրներ և մարտահրավերներ, 72-84:
4. Մեսրոպյան Հ.Հ., Պողոսեան Ա., «Սասնայ ծռեր» հերոսավեպը եւ բարբառագիտական տառադարձութեան նորագոյն միջոցների կիրառման անհրաժեշտութիւնը պատումները վերահրատարակելիս, էջ 158-171:
5. Ֆիշենկճեան Ա.Ա., Արեւմտահայերէնի ուսուցման կերպի/մեթոտի հիմնահարցերը եւ անոնց յաղթահարման հեռանկարները, էջ 226-237:

***Հոդվածները հրապարակվել են «Հայագիտությունը լեզուների և մշակույթների համատեքստում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Մոսկվա, ՄՊԼՀ հրատ., 2025, 286 էջ:**

1. Ասոյան Թ.Ա., Միլիթարյանների բառարանագրական գործունեության շուրջ, էջ 36-44:
2. Կատվայան Վ.Լ., Ռուսերեն փոխառությունները բարբառային հայերենում (ըստ Բայազետի բարբառի ընձեռած նյութի), էջ 66-76:
3. Քումունց Մ.Ա., Գորիսի բարբառի տոհմանունները, էջ 77-90:

4. Մերոպյան Հ.Հ., Հայ-ռուս-վրաց-քուրդ լեզվամշակույթը Հովսեփ Օրբելու բարբառային հետազոտություններում, էջ 112-121:
5. Մխիթարյան Գ.Մ., *Կօշիկ, ընծայ, պատարագ* անվանումների իմաստային առնչությունների շուրջ, էջ 122-127:
6. Թադևոսյան Հ.Մ., Բառիմաստային նոր դրսևորումներ 13-րդ դարի բժշկարաններում, էջ 143-149:
7. Ղամոյան Լ.Ա., Փոխառություններ ռուսերենից «հագուստ, անձնական խնամք, զարդարանք» իմաստային դաշտում, էջ 150-157:
8. Սարգսյան Մ.Ա., Հայերենի ուսուցման առանձնահատկությունները միջմշակութային հաղորդակցության համատեքստում, էջ 192-199:
9. Ֆիշենկճեան Ա.Ա., Արեւմտահայերէնը Հայաստանի Հանրապետութեան մէջ (21-րդ դար), էջ 273-282:

***Հոդվածները հրատարակվել են «Золотой V век армянской культуры: Достижения. Мировое значение» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Մոսկվա, «Ключ-С» հրատ., 2025, 390 էջ (ռուսերեն):**

1. Далалян Т.С., Отражение учения о четырех первоосновах мира в духовной и философской литературе IV-VII вв, с. 189-195.
2. Мхитарян Г.М., Древние музыкальные инструменты в армянском переводе Библии, с. 253-260.
3. Катвалян В.Л., Отражение некоторых особенностей мащтоцовой орфографии в фонетических системах современных армянских диалектов, с. 261-269.
4. Месропян А.О., Влияние христианской религии на лексический запас армянского языка, с. 270-278.
5. Амбарцумян В.Г., Язык труда «Многовещательные речи» св. Григория Просветителя: оригинал или перевод?, с. 279-290.
6. Григорян С.М., Особенности толкования Библии в «Книге вопрошений» Григора Татеваци, с. 298-303.

ՄԱՍ II
ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
2025 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝
ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ա. ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2025 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ԲԱՌԱՐԱՆ

Նոր բառեր, Թ պրակ, ԼԻ հրատ., 2025, 159 էջ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

1. «Բառագիտության արդի խնդիրներ. Հանրապետական գիտա-
 ժողովի նյութեր», Ե., ԼԻ հրատ., 2025, 136 էջ:
1. «Գրական հայերենը ՁԼՄ-ներում (միջոցառման նյութեր)», Ե.,
 ԳԱԱ ԼԻ հրատ., 2025, 67 էջ:
2. Ներսիսյան Վ.Ա., Արդի հայերենի բառագիտության, քերական-
 նության և ռճագիտության հարցեր, Ե., ԼԻ հրատ., 2025, 132 էջ:
3. Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազ-
 գային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2025, 259 էջ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Ղազարյան Հ.Ս., Ընդհանուր լեզվաբանություն. գործնական աշխա-
 տանքների ձեռնարկ, Ե., ԼԻ հրատ., 2025, 209 էջ:

ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. Առաքելյան Կ.Լ., Նորակազմ բառեր արդի հայ քնարերգության մեջ, «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 8-12:
2. Առաքելյան Կ., Ջրի և ոռոգման գեղարվեստական պատկերը Միաք Մեծարենցի լեզվով, «Էջմիածին», Թ, 2025, էջ 120-128:
3. Առաքելյան Կ.Լ., «Հրապարակ» օրաթերթի լեզվի մասին, «Գրական հայերենը ՁԼՄ-ներում». Մայրենիի օրվան նվիրված միջոցառման նյութեր, Ե., ԼԻ հրատ, 2025, էջ 4-8:
4. Բարսեղյան Ա.Գ., Հեռուստատեսության լեզուն Հ 1 և 1լուրեր.ամ (<https://www.1lurer.am/>) «Գրական հայերենը ՁԼՄ-ներում». Մայրենիի օրվան նվիրված միջոցառման նյութեր, Ե., ԼԻ հրատ, 2025, էջ 9-12:
5. Բարսեղյան Ա.Գ., Խնդրառություն կապակցության եղանակի ընդհանուր բնութագիրը արդի գեղարվեստական արձակում, 19, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2025, էջ 345-351:
6. Բարսեղյան Ա.Գ., Շարահյուսական կապակցման եղանակների ընդհանուր բնութագիրը, 20, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2025, էջ 427-436:
7. Գալստյան Ա.Ս., Թեյան Լ.Գ., Հայերենի տալ բայի իմաստագործառական քննություն, «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 4-7:
8. Թեյան Լ.Գ., Լեզվական նորմից շեղումներ զանգվածային տեղեկատվության լեզվում, «Գրական հայերենը ՁԼՄ-ներում». Մայրենիի օրվան նվիրված միջոցառման նյութեր, Ե., ԼԻ հրատ, 2025, էջ 13-19:
9. Թեյան Լ.Գ., Բարդ նախադասության տեսության հարցերը Ս. Աբրահամյանի աշխատություններում, Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 81-90:

10. Խաչատրյան Ն.Գ., Հ 2-ի «Լրաբեր» հաղորդաշարի լեզվական վերլուծություն, «Գրական հայերենը ՁԼՄ-ներում». Մայրենիի օրվան նվիրված միջոցառման նյութեր, Ե., ԼԻ հրատ, 2025, էջ 20-29:
11. Հակոբյան Ֆ.Ա., Արհեստական բանականության համակարգերի դերը բառիմաստի բացատրության գործընթացում, «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 22-27:
12. Հակոբյան Ֆ.Ա., Արհեստական բանականության տեխնոլոգիաների կիրառությունը էլեկտրոնային բառարանագրության մեջ, «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 28-34:
13. Ղազարյան Հ.Ս., Հնչերանգը և տրոհումը տարաբժեք շարահյուսական կառույցների տարբերակման միջոց, Մերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 114-125:
14. Ղազարյան Հ.Ս., Լեզվական շեղումներ(«5-րդ ալիք» հեռուստաընկերություն), «Գրական հայերենը ՁԼՄ-ներում». Մայրենիի օրվան նվիրված միջոցառման նյութեր, Ե., ԼԻ հրատ, 2025, էջ 30-36:
15. Ղազարյան Հ.Ս., Տարաբժեք երկրորդական ձևությունները ժամանակակից հայերենում, «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 58-68:
16. Ղամոյան Լ.Ա., Փոխառություններ ռուսերենից «հագուստ, անձնական խնամք, զարդարանք» իմաստային դաշտում, «Հայագիտությունը լեզուների և մշակույթների համատեքստում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, ՄՊԼՀ հրատ., 2025, էջ 150-157:
17. Ղամոյան Լ.Ա., «Խաղ» արմատի բառակազմական և իմաստային առանձնահատկությունները, «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 69-80:

18. Ղամոյան Լ.Ա., «Պար» հասկացությունը և նրա բառակազմական առանձնահատկությունները գրական հայերենում», № 3 (48), Բանբեր Երևանի համալսարանի, 2025, էջ 119-127:
19. Ղամոյան Լ.Ա., Անադարտ պահենք մեր մայրենին, «Գրական հայերենը ՁԼՄ-ներում». Մայրենիի օրվան նվիրված միջոցառման նյութեր, Ե., ԼԻ հրատ, 2025, էջ 37-43:
20. Մարգարյան Ի.Ա., Համանուն և հարանուն բաղադրիչներով կազմություններն արդի հայերենում, «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 122-134:
21. Մարգարյան Լ.Գ., Արցախի բնակավայրերի *ի* վերջնահնչյուն բաղադրիչով անվանումների քննություն, «Լեզու և լեզվաբանություն» 1 (32), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 63-79:
22. Մարգարյան Լ.Գ., *-Կերտ, -ստան* և *-ավան* ձևայինների իմաստագործատական արժեքը Արցախի բնականուններում, Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 168-178:
23. Մարգարյան Լ.Գ., Հաղորդում Մայրենիի տոնի առիթով, «Գրական հայերենը ՁԼՄ-ներում». Մայրենիի օրվան նվիրված միջոցառման նյութեր, Ե., ԼԻ հրատ, 2025, էջ 44-46:
24. Մկրտումյան Ա.Ա., *Մեղր* և *մեղու* բառերը և դրանցով կազմությունների իմաստային (թեմատիկ) դասակարգումը հայերենում, Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 213-225:
25. Մովսիսյան Ռ.Ա., Լեզվական սխալներ լրատվական կայքէջերից, «Գրական հայերենը ՁԼՄ-ներում». Մայրենիի օրվան նվիրված միջոցառման նյութեր, Ե., ԼԻ հրատ, 2025, էջ 47-53:
26. Մովսեսյան Ռ.Ա., Ղարաբաղի բարբառի դարձվածքների ուսուցումը, «Գիտական Արցախ», 1, Ե., 2025, էջ 108-120:
27. Ներսիսյան Վ.Ա., Դիտարկումներ լրատվամիջոցներում հայերենի գործածության վերաբերյալ, «Գրական հայերենը ՁԼՄ-ներում»

- րում»։ Մայրենիի օրվան նվիրված միջոցառման նյութեր, Ե., ԼԻ հրատ, 2025, էջ 54-59:
28. Ներսիսյան Վ.Ա., Ղալակյան Ռ.Ա., Բառապաշարի լեզվաճանաչական առանձնահատկությունները Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 20, Ե., 2025, էջ 327-338:
29. Ներսիսյան Վ.Ա., Բառակազմության տեսական և մանկավարժական հարցերի քննությունը Արարատ Ղարիբյանի աշխատություններում, «Լեզու և լեզվաբանություն», 1 (32), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 36-50:
30. Ներսիսյան Վ.Ա., Բառակազմության տեսական հարցերի քննությունը Ս. Աբրահամյանի աշխատություններում, Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 226-238:
31. Պապիկյան Ս.Վ., «Ժողովուրդ» օրաթերթի լեզվի մասին, «Գրական հայերենը ԶԼՄ-ներում»։ Մայրենիի օրվան նվիրված միջոցառման նյութեր, Ե., ԼԻ հրատ, 2025, էջ 60-65:
32. Պապիկյան Ս.Վ., Դիտարկումներ «Հատկական փոխառություն» տերմինի մասին, «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 89-95:
33. Պապիկյան Ս.Վ., «Բնակավայր, կացարան» իմաստային խմբի որոշ հատկական փոխառությունների քննություն, «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսում, 1 (33), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 77-85:
34. Ֆելեքյան Մ.Հ., Բառերի բացատրության բացասական կամ ժրխտական եղանակը հայերենի բառարաններում, «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 96-100:
35. Ֆելեքյան Մ.Հ., Բառերի պատճառաբանվածության մթազնույնը հայերենում, Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2025, № 3 (48), էջ 77-87:

36. Ֆիշենկճեան Ա.Ա., Ներգործական բայերու խնդրառութան հիմնահարցերը հայերէնի մէջ (արեւելահայերէն-արեւմտահայերէն), «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (22), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 93-106:
37. Ֆիշենկճեան Ա.Ա., Արեւմտահայերէնի ուսուցման կերպի/ մեթոտի հիմնահարցերը եւ անոնց յաղթահարման հեռանկարները, «Հայ բանասիրութեան հեռանկարներ. Ուսումնասիրութեան ու ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Լոս Անջելէս-Երեւան, N 1, ԱՄՆ Արեւմտեան թեմի հրատ., 2025, էջ 226-237:
38. Ֆիշենկճեան Ա.Ա., Արեւմտահայերէնը Հայաստանի Հանրապետութեան մէջ (21-րդ դար), «Հայագիտությունը լեզուների և մշակույթների համատեքստում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, ՄՊԼՀ հրատ., 2025, էջ 273-282:
39. Асоян Т.А., Папикян С.В., Вербальная агрессия в армянских и русских средствах массовой информации, Сборник научных статей Гаварского государственного университета, 19, 2025, ст. 365-374.
40. Асоян Т.А., О лексикографической деятельности Мхитаристов, Арменоведение в контексте языков и культур, Сборник научных статей 2-ой международной научно-практической конференции, Москва, 2025, ст. 36-44.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐԵՐ

Առաքելյան Կ., Նորակազմ բառեր արդի հայ քնարերգության մէջ (հոդված)

Հոդվածում նշվում է, որ նորակազմությունների ուսումնասիրությունը խիստ է կարևորվել միջոտ, առավել ևս վերջին ժամանակներում, որի վկայությունն են դրանց ուսումնասիրությանը նվիրված գիտական հետազոտությունները, նորակազմությունների բառարանները, ինչպես նաև ԳԱԱ լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի կազմած նոր բառերի պրակները:

Նշված միավորների թվում, ըստ հողվածագրի, ուրույն տեղ ու դեր ունեն բանաստեղծական բառերը, որոնք հեղինակային նորակազմությունների մի առանձին խումբ են: Հողվածագիրը նպատակ է ունեցել ներկայացնելու արդի հայ քնարերգության մեջ առկա նորակազմ բառերի և բառաստեղծման միտումները: Նյութը քաղվել է ԳԱԱ լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի հրատարակած Նոր բառերի ութ պրակներից: Պատահականության սկզբունքով ընտրվել է 150 բառ և փորձ է արվել դրանք ներկայացնել ըստ բառագիտական աշխատանքներում ընդունված դասակարգումների:

Առաքելյան Կ., Ջրի և ոռոգման գեղարվեստական պատկերը Միսաք Մեծարենցի լեզվում (հողված)

Հողվածագիրն անդրադառնում է XX դարասկզբի արևմտահայ կանանավոր քնարերգու Միսաք Մեծարենցը թե՛ չափածո, թե՛ արձակ գործերում ջրի և ոռոգման պատկերավորմանը: Նրա վկայությամբ՝ Մեծարենցի քնարերգության մեջ *ջուր* գոյականն ամենահաճախակի կիրառվող բառերից է: Ներկայացվում են Մեծարենցի ստեղծագործության մեջ առկա ջուր գոյականի ուղղակի և փոխաբերական կիրառությունները, *ջուր* արմատով կազմված բառերը, դրանց ոճական արժեքը:

Առաքելյան Կ., «Հրապարակ» օրաթերթի լեզվի մասին (հողված)

Հողվածում նշվում է, որ այսօր ԶԼՄ-ների և սոցցանցերի ազդեցությունը հանրային կյանքի վրա ահռելի է: Սրանով պայմանավորված՝ դրանց լեզուն մեծապես ներագրում է հանրային խոսքի ձևավորման վրա: Լրատվամիջոցները միմյանցից խիստ տարբեր են իրենց բնորոշ զանազան հատկանիշներով, այդ թվում գրագիտության մակարդակով:

Հողվածագրի կարծիքով՝ թերթում տպագրվող նյութերը հաճախ են աչքի ընկնում արդիականությամբ, լրատվական բարեվարքության կանոնների պահպանմամբ և այլն: Նա արձանագրում է նաև, որ լրագրի էջերում առկա են անհարկի փոխառություններ: Երբեմն հանդիպում են բառեր, որոնք հիմնականում միջազգայնորեն ճանաչված եզրույթներ են, սակայն սրանց հայերեն համարժեքներն առկա են, ուստի խրախուսելի չէ օտար բառի կիրառությունը: Թերթում առկա են ժողովրդախոսակցական և բարբառային բառաշերտին պատկանող միավորներ, որոնց կիրառությունը հիմնականում արդարացված է և ունի ոճական արժեք:

Հողվածագիրը համառոտ անդրադառնում է նաև հraparak.am-ի լեզվին և նշում, որ «Հրապարակի» համացանցային կայքում ևս նյութերը հրապարակվում են մաքուր գրական հայերեն, սակայն պայմանավորված լուրերն արագ հաղորդելու խնդրով և առկա մրցակցությամբ՝ երբեմն տեղ են գտնում վրիպակներ:

Ասոյան Թ., Մխիթարյանների բառարանագրական գործունեության շուրջ (հոդված)

Հողվածում արժևորվում է Մխիթարյանների դերը և ավանդը հայ նոր բառարանագրության զարգացման մեջ: Կարևորվում են հատկապես նրանց կազմած երկլեզվյան և բազմալեզվյան բառարանները, որոնք նպաստում էին օտար լեզուներ սովորելուն:

Ասոյան Թ., Պապիկյան Ս., Խոսքային ագրեսիան հայկական և ռուսական զանգվածային լրատվամիջոցներում (հոդված/ռուսերեն)

Հողվածում ներկայացվում և մեկնաբանվում են ագրեսիայի դրսևորումներ՝ որպես մարդկային վարքագծի դժվար բացատրելի երևույթներ: Հողվածագիրները նշում են, որ խնդիրը գրավել է հոգեբանների, սոցիոլոգների, բժիշկների, մշակութաբանների,

պատմաբանների, լեզվաբանների ուշադրությունը: Վերջիններս առանձնահատուկ նշանակություն են տալիս ագրեսիայի արտահայտման ձևերին և միջոցներին: Հետխորհրդային շրջանում Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության զանգվածային լրատվամիջոցների լեզուն խիստ փոփոխությունների է ենթարկվել. հավասարակշռված, ստանդարտացված լեզուն, որը բոլոր հրապարակումներում գրեթե միատեսակ է, իր տեղը զիջում է զգացմունքային և իրավիճակային խոսքին՝ ենթարկվելով պահի պահանջներին: ՋԼՄ-ների նպատակը տեղեկության միջոցով հասարակության վրա ազդելն է՝ ուղղված որոշակի խնդիրներ լուծելուն: Այդ նպատակով կիրառվում են տարբեր միջոցներ, այդ թվում՝ խոսքային ագրեսիան՝ ներառելով քաղաքական, հոգեբանական և սոցիալական ասպեկտներ: Հրապարակված տեքստերում ագրեսիան հանդես է գալիս որպես մանիպուլյացիայի միջոց:

Հովհաննիսյան Ս., Սարգսյան Դ. , Հեքիաթի հոգելեզվարանական կիրառություն: ... Եվ խոսեց հեքիաթը
(ուսումնական ձեռնարկ)

Ուսումնական ձեռնարկի առաջին մասում ներկայացված են հեքիաթաթերապիայի վերաբերյալ հոգելեզվարանական և ստեղծագործական հոգեբանության մոտեցումները, հեքիաթի միջոցով տարվող հոգեբանական աշխատանքի բնույթն ու առանցքային կողմերը: Ձեռնարկի երկրորդ մասը հեղինակային հեքիաթներ են՝ ուղղված անձնային աճի, ապրումների ճանաչման և կարգավորման, միջանձնային հարաբերությունների և գոյաբանական այլ ճգնաժամերի կարգավորմանն ու հաղթահարմանը:

Հովհաննիսյան Ս., Լեզվաբանական գիտության հանրայնացումը. Ժամանակակից մեթոդներ և գործիքներ (հոդված)

Հոդվածը վերաբերում է լեզվաբանական գիտության հանրայնացման հիմնախնդիրներին, նպատակներին և ժամանակակից գործիքներին: Ներկայացվում է լեզվաբանության հանրայնացման կարևորությունը՝ որպես գիտական գիտելիքը լայն հանրությանը հասանելի դարձնելու գործընթաց, որի նպատակը լեզվի դերի խորացված ընկալումն է հասարակական, մշակութային և հաղորդակցական համատեքստում, ինչպես նաև լեզվի վերաբերյալ տարածված կարծրատիպերի հաղթահարումը:

Ներկայացվում են ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում իրականացվող հանրայնացման աշխատանքները՝ սոցիալական հարթակները կիրառելը, գիտահանրամատչելի սեմինարները և քննարկումները, գիտական միջոցառումները և ՋԼՄ համագործակցության ձևաչափերը, ինչպես նաև հանրակրթական և միջին մասնագիտական հաստատությունների հետ տարվող աշխատանքը: Ընդգծվում է երիտասարդ գիտնականների խորհրդրդի դերակատարությունը հանրայնացման ռազմավարությունները

մշակելու և ուսանողներ ներգրավելու գործում: Ներկայացվում են նաև նոր նախաձեռնությունները՝ հանրամատչելի տեսադասընթացներ, կիրառական լեզվաբանությանը նվիրված փողքասթներ և «Լեզվագետ» էլեկտրոնային ամսաթերթի գաղափարը:

Հոդվածում նշվում են նաև ոլորտում առկա խոչընդոտները՝ ֆինանսական սահմանափակումներ, կրթական ծրագրերի բարեփոխումների անհրաժեշտություն և հանրամատչելի հարթակների հասանելիության խնդիրներ:

Միքայելյան Ս., Հայերենում ռուսերենի միջնորդությամբ կատարված արաբական փոխառություններ (հոդված)

Հոդվածում անդրադարձ է կատարվում փոխառության գործընթացում միջնորդ լեզվի դերին և ազդեցությանը, որոնք «կոնտակտային» լեզվաբանության՝ որպես փոխառությունների ուսումնասիրության վերաբերյալ գիտության դեռևս ոչ լիարժեքորեն պարզաբանված հարցերից են. արդյոք որպես փոխառության սկզբնաղբյուր պետք է համարել լեզուն, որում առկա է նախատիպը, թե լեզուն, որն էական ազդեցություն է ունեցել փոխառվող բառային միավորի ձևի և բովանդակության պլանների փոփոխության վրա:

Այս համատեքստում հոդվածում քննվում են ռուսերենի միջնորդությամբ հայերենին անցած արաբերեն ծագման բառային միավորներ՝ նպատակ ունենալով վերհանել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել արաբերեն ծագման բառերի՝ հայերեն թափանցելու հետևանքով: Փորձ է կատարվում զուգադրաբար վերլուծել բառային միավորների հնչյունական և բառիմաստային առանձնահատկությունները փոխատու, փոխառու և միջնորդ լեզուներում: Արդյունքները ցույց են տալիս, որ միջնորդ լեզուն որոշ դեպքերում էական ազդեցություն է ունեցել փոխառյալ բառային միավորի ձևի և բովանդակության պլանների փոփոխության վրա՝ այդպիսով երբեմն համարվելով փոխառության սկզբնաղբյուր:

Մկրտչյան Մ., Ներհականիշությունը հայերենի բառապաշարում (հոդված)

Հոդվածում տրվում են «ներհականիշություն» երևույթի բնորոշումները լեզվաբանական գրականության մեջ, ապա քանակական և նկարագրական մեթոդների միջոցով տարբեր խմբերում են դաստիարակում հայերենի ներհականիշություն ունեցող բառերը, որոնք քաղվել են Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ից:

Հոդվածագիրը նշում է, որ աշխատանքը կարևոր է ոչ միայն այն առումով, որ առաջին անգամ հայոց լեզվի նյութի հիման վրա առանձնացվում են ներհականիշություն ունեցող բառերը, այլ նաև այն բանով, որ այդ նյութը հետագայում կարող է օգտագործվել հայերենի դասավանդման, բառանագրության, հայերենի և օտար լեզուների զուգադրական ուսումնասիրությունների ժամանակ:

Մկրտչյան Մ., Հետհիշողությունն իբրև մշակութային հիշողություն ձևավորող գործոն. նշանագիտական մոտեցում (հոդված)

Հոդվածագիրը նշանագիտական դիտանկյունից դիտարկում է մշակութային հիշողությունը՝ որպես հանրային ինքնության պահպանման առանցքային գործոն: Նա փաստում է, որ «տրավմատիկ հիշողությունն» ու «հետհիշողությունը» Հայոց ցեղասպանության համատեքստում ձևավորում են միջսերնդային կապ, որն ամրագրվում է մշակութային կոդերի միջոցով: Հոդվածումը վերլուծվում է Անրի Վերնոյի «Մայրիկ» ինքնակենսագրությունը և նշվում, որ անձնական հիշողությունը վերածվում է հավաքական մշակութային ժառանգության:

Հոդվածագիրը եզրակացնում է, որ արվեստը, մասնավորապես՝ կինոն և գրականությունը, հանդես են գալիս որպես հետհի-

շողության փոխանցման հզոր գործիքներ՝ ապահովելով հանրության ինքնության շարունակականությունը:

Մկրտչյան Մ., Գրքի շապիկը որպես նշանագիտական թարգմանություն. Անրի Վերնոյի «Մայրիկ» ինքնակենսագրության հիման վրա (հոդված)

Հոդվածը համեմատական-նշանագիտական դիտանկյունից քննում է Անրի Վերնոյի «Մայրիկ» վեպի տարբեր հրատարակությունների գրքի շապիկները՝ որպես նշանագիտական թարգմանության և բազմաեղանակային իմաստաստեղծման հարթակ: Հեղինակը նշում է, որ գրքի շապիկները խոսքային և ոչ խոսքային կոդերի բարդ համակարգեր են, որոնք վերակոդավորում են տեքստի իմաստը տարբեր լսարանների համար:

Վերլուծելով պատկերային նշանների կիրառությունը՝ հոդվածագիրը ցույց է տալիս, թե ինչպես են ֆրանսիական հրատարակությունները շեշտը դնում անձնական հիշողության, իսկ հայկականները՝ հավաքական հիշողության վրա: Հոդվածագիրը եզրակացնում է, որ գրքի շապիկը դինամիկ նշանագիտական տարածք է, որտեղ նշանների, կոդերի միջոցով արտահայտվում է բուն տեքստի հաղորդույթը:

Մարգարյան Մ., Թվային հայագիտությունը որպես նոր ուղղություն. խնդիրներ և մարտահրավերներ (հոդված)

Թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց լեզվաբանության մեջ ի հայտ եկան նոր գիտակարգեր, որոնք մի կողմից ասպարեզից դուրս են մղում նախկինում գործառող գիտակարգերը, մյուս կողմից էլ՝ սկսում են կենտրոնական դեր զբաղեցնել լեզվաբանական հետազոտությունների բնագավառում: Այժմ ապրում ենք թվային տեխնոլոգիաների դարաշրջանում, և անվերապահորեն կարող ենք ասել, որ թվային այս դարաշրջանում գործ ունենք *թվային լեզվաբանության* հետ, որն ունի

միջգիտակարգային բնույթ, և որի ուսումնասիրության մեջ գերիշխող է դառնում քանակական մոտեցումը:

Հողվածագրի նպատակն է ներկայացնել լեզվաբանական գիտական հարացույցի փոփոխությունները թվային տեխնոլոգիաների դարաշրջանում, անդրադառնալ այս փոփոխությունների դրական և բացասական կողմերին, վեր հանել թվային լեզվաբանության առանձնահատկությունները և դրա հիման վրա *թվային հայագիտության* զարգացման միտումները և խնդիրները: Նաև ցույց տալ հայագիտական գիտակարգերի համակարգի տեղաշարժերը, փոխակերպումները և զարգացման հեռանկարները:

**Տիգրանյան Ս., Ղուրանի արարվածության շուրջ բանավեճերը:
Իրն Թայմիայի մոտեցումները (հողված/անգլերեն)**

Հողվածում փորձ է արվում ներկայացնելու Ղուրանի արարվածության հարցի ծագման պատմությունը և պարզաբանելու ուսումնասիրվող հարցի վերաբերյալ Իրն Թայմիայի մոտեցումները՝ թարգմանաբար ներկայացնելով հեղինակի աշխատությունների խնդրո առարկա թեմայի տեսանկյունից ուշագրավ հատվածները: Հողվածագիրն արձանագրում է, որ Իրն Թայմիան ոչ թե հակասում է հանբալիականությանը, ինչպես պնդում են որոշ հետազոտողներ, այլ փորձում է լրացնել և հստակեցնել մագհաբի մոտեցումները քննվող հարցի շուրջ՝ ազատելով դրանք երկիմաստությունից:

**Տիգրանյան Ս., Ֆաթիմյան խալիֆաների գործունեության
քննադատումը և կրոնական դրույթների արտացոլումը Իրն
Թայմիայի ուսմունքում (հողված/ռուսերեն)**

Հողվածում ուսումնասիրվում են հանբալիական կրոնաիրավական դպրոցի ականավոր ներկայացուցիչ Իրն Թայմիայի (1263-1328)՝ Ֆաթիմյան խալիֆաների քաղաքականության և դավանաբանական մի շարք հարցերի քննադատությունները՝ որպես իսլամում

վտանգավոր նորարարությունների (արաբ.՝ ځځ) դեմ պայքարի մաս: Հողվածագիրն անդրադարձ է կատարում նաև Ֆաթիմյան խալիֆների կողմից հայազգի վեզիրներ նշանակելու, սրբավայրեր կառուցելու և դրանց պաշտամունքի, խալիֆների անսխալականության և աստվածային էության հարցերի շուրջ կրոնաիրավագետի մոտեցումներին:

Ֆիրյան Ա., Փոփոխվող հասարակությունում անոմիկ միտումները բիզնես էթիկայի և առաջնորդության հետազոտությունների մեջ
(հողված/անգլերեն)

Հողվածն ուսումնասիրում է բիզնես էթիկայի և առաջնորդության ոլորտում գիտական հրապարակումների միտումները: Առանձնացվում են գիտական հրապարակումներին բնորոշ հիմնական անոմիկ հատկանիշները, այդ թվում՝ հետազոտության առարկայի բազմակի սահմանումները, սոցիալական և բնական գիտություններից տերմինաբանության ներառումը բիզնես էթիկայի և առաջնորդության թեմատիկայում, մշակութաբանական մոտեցումը հասարակության սոցիալ-քաղաքական, տնտեսական, բարոյական, էթիկական և սոցիալական գործընթացների սահմանման մեջ, գիտական հետազոտության առարկաների բարձր հարմարվողականությունը փոփոխվող սոցիալական պայմաններին, ինչպես նաև բիզնես էթիկայի և առաջնորդության հետազոտությունների կիրառական ուղղվածությունը:

Հողվածագիրը մանրամասնորեն ներկայացնում է իրականացված հետազոտության երեք փուլերը՝ բովանդակային վերլուծություն, Կեմերոն-Քուինի մեթոդի կիրառում, բովանդակային վերլուծության և կազմակերպական մշակույթի գնահատմանը վերաբերող էմպիրիկ արդյունքների համադրում:

Գ. ՀԱՅ ԲԱՐՔԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Կատվայան Վ., Հայոց լեզվի բարբառագիտական աստլա. Պրակ Ա., Գեղարքունիքի մարզ, Ե., ԼԻ հրատ., 2025, 325 էջ:

ՀՈՒՎԱԾՆԵՐ

1. Գևորգյան Գ.Գ., Կապային կառույցների հոմանիշ ձևեր արդի հայերենում, Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի «Միջազգային 18-րդ տարեկան գիտաժողով», մաս II, Ե., 2025, էջ 662-670:
2. Խաչատրյան Հ.Ռ., Դիտարկումներ Կոզենի բարբառի բառապաշարի շուրջ, «Ջահուկյանական ընթերցումներ», 1(22), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 13-28:
3. Կատվայան Վ.Լ., Ռուսերեն փոխառությունները բարբառային հայերենում (ըստ Բայազետի բարբառի ընձեռած նյութի), «Հայագիտությունը լեզուների և մշակույթների համատեքստում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, ՄՊԼՀ հրատ., 2025, էջ 66-76:
4. Կատվայան Վ.Լ., Լոռու խոսվածքի և Արարատյան բարբառի առնչությունների շուրջ, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (22), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 29-47:
5. Կատվայան Վ.Լ., Լոռու խոսվածքին հատուկ որոշ բառերի մասին (համեմատական վերլուծություն), «Պատմաբանասիրական հանդես», 2025, 2 (229), էջ 209-225:
6. Մեսրոպյան Հ.Հ., Հայ-ռուս-վրաց-քուրդ լեզվամշակույթը Հովսեփ Օրբելու բարբառային հետազոտություններում, «Հայագիտությունը լեզուների և մշակույթների համատեքստում» միջազգային

- գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, ՄՊԼՀ հրատ., 2025, էջ 112-121:
7. Մեսրոպյան Հ.Հ., Արևմտահայ բարբառները հայ եկեղեցու հովանու ներքոյ. Գարեգին Սրուանձտեանց, «Հայոց եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2025, էջ 163-177:
 8. Մեսրոպյան Հ.Հ., Ռշտունիքի բարբառային հայերենի ընդհանուր բնութագիրը (Ըստ Ռշտունցիների պատմած ժողովրդական հեքիաթների), «Լեզու և լեզվաբանություն», 1 (32), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 17-35:
 9. Մեսրոպյան Հ.Հ., Պօղոսեան Ա., «Սասնայ ծռեր» հերոսավեպը եւ բարբառագիտական տառադարձութեան նորագոյն միջոցների կիրառման անհրաժեշտութիւնը պատումները վերահրատարակելիս, «Հայ բանասիրութեան հեռանկարներ. ուսումնասիրութեան ու ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Լոս Անջելէս-Երևան., N 1, ԱՄՆ Արեւմտեան թեմի հրատ., 2025, էջ 158-171:
 10. Մեսրոպյան Հ.Հ., Հայ ժողովրդի բռնի տեղահանութիւնները՝ պատճառ լեզուամշակութային արժեքների խաթարման, «Հայութեան տեղաշարժերը եւ փոխակերպումները 20-րդ դարուն եւ 21-րդ դարու սկիզբին» գիտական յօդուածներու ժողովածու, Բէյրութի Հայկազեան համալսարան-Երևանի պետական մանկավարժական համալսարան, ՀՀ – Լիբանան, 2025, էջ 37-46:
 11. Մեսրոպյան Հ.Հ., Շիրակի խոսվածքի բուսանուններն ըստ Ա. Մխիթարյանցի բառարանի, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 12-րդ գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2025, էջ 290-295:
 12. Մեսրոպյան Հ.Հ., Լեզուական դիտարկումներ հայոց դիւցազնավեպի շուրջ, «Հասկ» հայագիտական տարեգիրք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Անթիլիաս-Լիբանան, 2025, էջ 567-579:

13. Մկրտչյան Գ., **Խառատյան Մ. Հ.**, Լեզվական նորմը և միջին հալթերենը, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (22), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 125-143:
14. Սարգսյան Ա. Յու., Մինասյան Շ.Մ., Ղարաբաղի բարբառ. արդի վիճակը և պահպանման հեռանկարները, «Հայ բանասիրութեան հեռանկարներ. ուսումնասիրութեան ու ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Լոս Անջելես-Երևան., N 1, ԱՄՆ Արեւմտեան թեմի հրատ., 2025, էջ 57-71:
15. Սարգսյան Ա. Յու., Մինասյան Շ.Մ., Արցախի (Ղարաբաղի) բարբառը և բանահյուսությունը XIX դարի սկզբնաղբյուրներում և ուսումնասիրություններում, 1, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2025, 128-142:
16. Սարգսյան Ա. Յու., Մինասյան Շ.Մ., Ալթունյան Է.Ռ., Մերգեյ Աբրահամյանի բարբառագիտական ներդրումը, «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսում, 2 (33), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 15-25: էջ 3-14:
17. Սարգսյան Ա., Մինասյան Շ., Արցախի ազգագրությունը, բանահյուսությունը և բարբառը XIX դարի երկրորդ կեսի ռուսական հրատարակություններում, «ՎԷՄ», 4, Ե., 2025, էջ 224-244:
18. Վարդանյան Ա. Վ., Պարսկերենից փոխառյալ բառակապակցություններ ճահուկ-Վայքի միջբարբառում, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (22), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 81-92:
19. Վարդանյան Ա. Վ., Ճահուկ-Վայքի միջբարբառը վիմագրերում, որմնանկարների մակագրութիւններում եւ ձեռագրերի յիշատակարաններում, «Հանդես ամսօրեայ», 1-12, Վիեննա, 2025, էջ 115-122:
20. Վարդանյան Ա. Վ., Բառերի իրադրական տարբերակները ճահուկ-Վայքի միջբարբառում, Մերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 252-256:

21. Քումունց Մ.Ս., Լավրենտի Հովհաննիսյան, «Ղարաբաղի (Արցախի) բարբառի հնարանությունները» (գրախոսություն), «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, 2025, էջ 282-288:
22. Քումունց Մ., Գորիսի բարբառի տոհմանունները, «Арменоведение в контексте языков и культур: сборник научных статей II Международной научно-практической конференции, г. Москва, 18–19 апреля 2023 года / ответственный редактор А. Ж. Мартиросян, ред коллегия: Н. С. Шаталова, Г. А. Акобджанян, Ж. С. Хулхачиева и др.», Մոսկվա, 2025, էջ 77-90:
23. Katvalyan V.L., Khachatryan H.R., Barnasyan J.A., Gharibyan A.A., Hodgson C., Kumunts M.S., Domestic Animals in Armenian Proverbs: A Cognitive Approach, Saint-Petersburg, "Etnografia", N 3, 2025, p. 162-185.
24. Katvalyan V.L., Gharibyan A.A., Hovhannisyann N.G., Mkhitarian G.M., Analysis of Gender Differences in the Vocabulary of Dialectal Armenian, Barcelona, "Dialectologia" N 35, 2025, p. 109-131.
25. Katvaljan V.L., Gharibyan A.A., Hovhannisyann N.G., Vardanyan A.V., Mkhitarian G.M., Rivola's Baragirk' Hayoc'. Dictionarium Armeno-Latinum (1621): An Analysis of Vocabulary Related to Nations and Countries in the First Printed Armenian Dictionary, Toronto, "Lexocography", vol. 12, iss. 2, 2025, p. 53-73.
26. Kumunts M.S., Margaryn I.A., Miqayelyan S.A., Khachatryan V.M., Gevorgyan G.G., Khachatryan H.R., Grigoryan S.M., Nersisyan L., Indo-European origins of Syunik-Artsakh Agricultural Terms, Singapore, "Forum for Linguistic Studies", vol. 7, iss. 5, 2025, p. 535-548.
27. Варданян А.В., Хранитель армянского Великого поста и шумерский Хумбаба, "Религиоведение", N 3, Благовещенск, 2025, с. 59-65.
28. Катвалян В.Л., Отражение некоторых особенностей маштоцовской орфографии в фонетических системах современных армянских диалектов, «Золотой V век армянской культуры: Достижения. Мировое значение» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, «Ключ-С» հրատ., 2025, с. 261-269.

29. Месропян А.О., Влияние христианской религии на лексический запас армянского языка, «Золотой V век армянской культуры: Достижения. Мировое значение» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, «Ключ-С» հրատ., 2025, с. 270-278.
30. Месропян А.О., Роль епархии российских армян в развитии армянской диалектологии, "Культурное наследие Российской и Ново - Нахичеванской епархии Армянской Апостольской Церкви. 1717-2025", Санкт-Петербург, Материалы международной конференции по арменоведению, 2025, с. 17- 23.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Գևորգյան Գ., Կապային կառույցների համանիշ ձևեր արդի հայերենում (հոդված)

Յուրաքանչյուր լեզու հատկանշվում է լեզվական միջոցների ընտրության և գործածության պատմականորեն պայմանավորված կանոններով՝ լեզվական նորմերով, որոնք ընդունելի են լեզվի զարգացման տվյալ փուլում: Լեզվական նորմին համապատասխանող ձևերին զուգահեռ՝ գործածվում են նաև ոչ կանոնական կազմություններ: Տարբերակային կամ համանիշ կառուցատիպերով են հատկանշվում նաև կապային կառույցները (կապ+կապի խնդիր): Հոդվածում դիտարկվում են դրանց համանշային ձևերը, կիրարկության որոշ յուրահատկություններ, միաժամանակ լեզվական նորմի հայեցակետից արվում են որոշակի նկատառումներ առկա զուգաձևերի, շեղումների և սխալակազմությունների վերաբերյալ:

Խաչատրյան Հ. Դիտարկումներ Կոզենի բարբառի բառապաշարի շուրջ (հոդված)

Հոդվածագիրն արձանագրում է, որ Կոզենը պատմական Արցախի նահանգի հյուսիսային բնակավայրերից է, որը գտնվում է

Ադրբեջանի Թովուզի շրջանում: Փաստվում է, որ որոշ հետազոտողներ կոզենցիներին համարում են «հայադավան և հայախոս դարձած ուտիացոց մնացորդներ»: Սակայն այս փաստարկումը հերքվել է: Կոզենի բարբառը որևէ կապ չունի ուղիներենի հետ, և այն Խոյի, Ղարաբաղի, Ագուլիսի բարբառների ու թուրքերենի մի յուրօրինակ խառնուրդ է:

Արցախյան շարժումը սկսվելուն պես Դաշտային Ղարաբաղում և Ադրբեջանի այլ վայրերում ապրող հայության հետ տեղահանվել են նաև կոզենցիները, որոնց մի մասը բնակություն է հաստատել Արարատի մարզի Մասիսի շրջանի Սիս գյուղում, և այսօր էլ այնտեղ բնակվող կոզենցիների ավագ և միջին սերունդը խոսում է Կոզենի բարբառով:

Ըստ հոդվածագրի՝ Կոզենի բարբառի բառապաշարի քննությունը կարևորվում է այն պատճառով, որ բնօրրանից կտրված այս բարբառը կորստյան վտանգի առջև է կանգնած: Բարբառային միավորի պահպանված վիճակի ամրագրմամբ և բարբառային նյութի քննությամբ արձանագրվել են հայերենի յուրահատուկ բարբառներից մեկի՝ Կոզենի բառապաշարի ուշագրավ դրսևորումները:

Հոդվածագիրը, քննելով Կոզենի բարբառի բառապաշարային առանձնահատկությունները, մեկ անգամ ևս փաստում է, որ հոդս են ցնդում այն թյուր կարծիքները, թե կոզենցիները «ուտիացոց մնացորդներ են», որովհետև բարբառում անադարտորեն պահպանվել են ոչ միայն հինհայերենյան բազմաթիվ հնչյունական հատկանիշներ (*ձիւն>ձիւ*), այլև բառային (*աղբեր*, *աղինջ*, *արագ*, *արկաթ*, *արկանք*, *արախա*) և բարբառային (*օխտ*, *օղձ*, *նօթ*, *կաքահալ*) հնարանություններ:

Կոզենի բարբառում կենսունակ են նաև բարբառների հինհայերենյան բառաշերտում առկա գրաբարյան մատենագրության մեջ իրենց զուգահեռներն ունեցող, սակայն գրական հայերենում ոչ գործածական բառեր (*աղագ*, *աք*, *զենայ*):

**Կատվայան Վ., Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս.
Պրակ Ա., Գեղարքունիքի մարզ
(մենագրություն/ հայերեն և անգլերեն)**

Հեղինակի հավաստմամբ՝ «Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս. Պրակ Ա., Գեղարքունիքի մարզ» խորագրով աշխատությանը սկսվում է հայերենի բարբառների տարածաշրջանային ատլասների կազմումը, որոնց ամբողջացումով և ամփոփումով կձևավորվի Հայաստանի Հանրապետության բարբառային ընդհանուր ատլասը:

Հեղինակը նշում է, որ Ատլասի սույն պրակում օգտագործվել են հիմնականում 2013-2015 թթ. «Գեղարքունիքի մարզի բարբառային համապատկեր» ծրագրով հավաքված նյութերն ու տվյալները, ըստ անհրաժեշտության դիտարկվել են նաև «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով» Գեղարքունիքի մարզի մոտ մեկ տասնյակ բնակավայրերի խոսվածքների հատկանիշների գրանցումները: Զուգաբանությունները ձևակերպվել են՝ հիմնականում նկատի ունենալով բարբառային այն հատկանիշները, որոնք ներկայացված են «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 1. Գեղարքունիքի մարզ» աշխատությունում: Ատլասը պարունակում է 2 ընդհանուր և 65 զուգաբանական քարտեզներ, որոնք ընդգրկում են շուրջ ինը տասնյակ բնակավայր: Ընդհանուր քարտեզներից առաջինում տարագույն կետերով սահմանագատվում են տարբեր շրջանների բնակավայրերը, երկրորդում ներկայացվում են մարզում գործածվող բարբառային միավորների տարածման գոտիները: Քարտեզներում սովորաբար ներկայացվում է մեկ զուգաբանություն, որը կարող է ունենալ կամ չունենալ տարբերակային դրսևորումներ: Տարբերակների առկայության դեպքում ամեն մեկի համար սահմանվում է կետերի առանձին գունավորում, որով նշվում են տվյալ հատկանիշն ունեցող բնակավայրերը: Տարբերակների բացակայության դեպքում հատկանիշն ունեցող բնակավայրերը նշվում են միագույն

կետերով: Մի շարք դեպքերում միևնույն քարտեզում ներկայացվում են համանման և զուգահեռ զուգաբանություններ, ավելի ընդհանուր իրողության տարաբնույթ դրսևորումներ ներկայացնող զուգաբանություններ, որևէ զուգաբանություն և դրան առնչվող հարակից հատկանիշ, որևէ զուգաբանություն և իբրև դրա առկայության հետևանք դրսևորվող հատկանիշ և այլն: Ատլասի՝ զուգաբանություններ ներկայացնող բոլոր քարտեզները ունեն հայերեն և անգլերեն մեկնաբանություններ: Աշխատանքը համալրված է նաև ժողովրդագրական տեղեկություններով, մարզի բնակավայրերից յուրաքանչյուրի բնակչության թվաքանակն արտացոլող աղյուսակով, բարբառային միավորների տարածական ընդգրկումը ներկայացնող տեղեկանքով: Առանձին աղյուսակում տրվում է ամեն մի բնակավայրին բնորոշ հատկանիշների խումբը: Ատլասը եզրափակվում է մարզում գործածվող բարբառային միավորների ընդհանուր բնութագրերի և դրսևորումների ներկայացումով, զուգաբանությունների և քարտեզների ցանկով:

Կատվայյան Վ., Լոռու խոսվածքին հատուկ որոշ բառերի մասին (համեմատական վերլուծություն) (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ Լոռու խոսվածքի բառապաշարին անդրադարձը պայմանավորվում է հայ բարբառագիտության մեջ այդ խոսվածքի և Արարատյան (Երևանի) բարբառի փոխհարաբերությունների վերաբերյալ եղած տարակարծություններով: Ընդգրկված լինելով Արարատյան բարբառի կազմում՝ Լոռու խոսվածքն ունի այդ բարբառից տարբերվող շատ հատկանիշներ, միաժամանակ զգալի ընդհանրություններ ունի Ղարաբաղի ու Թբիլիսիի բարբառների հետ: Այս առնչությունները ուսումնասիրողները դիտարկել են հիմնականում հնչյունական և քերականական հատկանիշների առումով՝ գրեթե չանդրադառնալով բառապաշարին: Բացթողումն ինչ-որ չափով լրացնելու նպատակով Լոռու խոսվածքի բառային մի քանի տասնյակ միավորների դիտարկմամբ հոդվա-

ծագիրը վեր է հանել խոսվածքին բնորոշ բառաշերտի որոշ յուրահատկություններ նախ Արարատյան բարբառի այլ խոսվածքների, ապա նաև Ղարաբաղի ու Թբիլիսիի բարբառների հետ համեմատություններով: Ուսումնասիրությունը կատարվել է «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» «Հասկացական-բառանվանողական զուգաբանություններ» բաժնում ընդգրկված 478 հասկացություններ ներկայացնող բառանվանումների շրջանակում՝ խոսվածքին բնորոշ յուրօրինակ բառամիավորների ընտրություն կատարելով Լոռու մարզի տարբեր տարածաշրջաններ ներկայացնող մեկ տասնյակից ավելի բնակավայրերում լրացված տետրերից: Դիտարկումները ցույց են տվել, որ Արարատյան բարբառի այլ խոսվածքներից Լոռու խոսվածքի բառապաշարի զանազանությունները պայմանավորվում են ինչպես յուրօրինակ բառամիավորների առկայությամբ, այնպես էլ Ղարաբաղի ու Թբիլիսիի բարբառների էական ազդեցություններով: Հոդվածագիրը եզրակացնում է, որ խոսվածքի բառապաշարի առանձնահատկությունները, համահունչ են հնչյունաքերական իրողությունների ուսումնասիրությամբ կատարված եզրահանգումներին:

Կատվայան Վ., Լոռու խոսվածքի և Արարատյան բարբառի առնչությունների շուրջ (հոդված)

Հոդվածագիրը փաստում է, որ հայ բարբառագիտության մեջ Լոռու խոսվածքի կարգավիճակի խնդիրն ունեցել է տարբեր մեկնաբանություններ. մի դեպքում այն ուղղակի ընդգրկվել է Արարատյան բարբառի կազմում, այլ դեպքում համարվել է այդ բարբառի ենթաբարբառ, երրորդ դեպքում նշվել է, որ Լոռու խոսվածքը կարող է դիտվել ինչպես առանձին բարբառ, այնպես էլ Արարատյանի ենթաբարբառ: Փաստորեն, հիշյալ բարբառային միավորների փոխհարաբերությունների հարցը հայ բարբառագիտության մեջ մնում է առկախ: Հարցի վերաբերյալ գիտական հստակ և կողմ-

նորոշիչ տեղեկություններ ձեռք բերելու համար հողվածագիրը դիտարկում է Լոռու խոսվածքի շուրջ մեկ տասնյակ տարբերակներ՝ դրանք համեմատելով Արարատյան բարբառի Աշտարակի, Փարպիի, Օշականի, Արարատի և Էջմիածնի որոշ գյուղերի, Վայոց ձորի մարզի որոշ բնակավայրերի խոսվածքների հետ: Նշված տարբերակների շրջանակում դիտարկելով մոտ չորս տասնյակ զուգաբանությունների տարածագործառական յուրահատկություններ՝ հողվածագիրը ցույց է տալիս, որ Լոռու խոսվածքի դրսևորումները Արարատյան բարբառի խոսվածքներից տարբերվում են առնվազն 24,5 միավորով, որը նշանակում է, որ Լոռու խոսվածքը կարող է դիտվել իբրև Արարատյանից առանձին բարբառ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ բարբառային միավորը զուգորդում է Արարատյան, Ղարաբաղի բարբառներին, նաև միայն իրեն հատուկ հատկանիշներ՝ հողվածագիրը եզրակացնում է, որ մինչ այժմ Լոռու խոսվածք անվանված բարբառային միավորը ամբողջական ուսումնասիրությամբ ստացված փաստերի համադրման արդյունքում հավանաբար ի վերջո համարվի միջբարբառ և կոչվի Լոռու միջբարբառ:

**Վատվայան Վ., Ռուսերեն փոխառությունները բարբառային
հայերենում (ըստ Բայազետի բարբառի
ընձեռած նյութի) (հողված)**

Բարբառներում կատարված բառային փոխառությունները, ըստ հողվածագրի, հետաքրքրություն են ներկայացնում, որովհետև հայտնվելով գիտակցական կարգավորման չենթարկվող լեզվական գործընթացներում՝ արտացոլում են բարբառին բնորոշ օրինաչափություններ: Այդ կարգի փոխառությունները հողվածում դիտարկվում են Բայազետի բարբառին ռուսերենից անցած բառերի օրինակով: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելու ժամանակից հայերենը ռուսերենից շատ փոխառություններ է կատարել, դրանց թիվը էականորեն ավելացել է խորհրդային տարի-

ներին: Հողվածագիրը փաստում է, որ բարբառային հայերենին անցած ժուսերեն փոխառությունները ներկայացնում են բարբառակիրների միջավայրում գործածական իրողություններ ու հասկացություններ, ընդ որում՝ բարբառներում ժուսերեն փոխառությունների առկայությունը, որպես կանոն, պայմանավորված չէ լեզվակիր հանրությունների անմիջական շփումներով, այլ հետևանք է քաղաքական իրադրության: Բայազետի բարբառի ներկա դրսևորումներում ժուսերենից փոխառությունները, ըստ հողվածագրի հաշվումների, մոտ 1200 բառային միավոր է: Նշվում է, որ բարբառով զբաղված ամենավաղ նյութերում, որոնք վերաբերում են 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին, ժուսերենից փոխառյալ բառեր չեն հանդիպում: Հետևում է, որ այդպիսիք Բայազետի բարբառում մեծ քանակով ի հայտ են եկել նոր հայրենիքում (Սևանա լճի ափին) և առավելաբար խորհրդային շրջանում: Բարբառում ժուսերեն փոխառությունները վերաբերում են բազմազան ոլորտների: Սրանց հնչապատկերները առավելագույնս հարմարեցված են գործող արտասանական օրինաչափություններին: Ռուսերեն փոխառությունները բառակազմական առումով գործուն չեն (չհաշված բայական հարադրությունները), շատ են այդ լեզվի ածանցներով կազմությունները: Քիչ չեն իմաստափոխության դեպքերը: Փոխառյալ բառերը ձեռք են բերել բարբառի նույն կարգի բառերին հատուկ քերականական հատկանիշներ:

Կատվայան Վ., Ղարիբյան Ա., Հովհաննիսյան Ն., Մխիթարյան Գ., Բարբառային հայերենի բառապաշարի սեռային տարբերությունների վերլուծություն (հողված/անգլերեն)

Հողվածագիրները փաստում են, որ Բայազետի բարբառի տրամադրած նյութի դիտարկումը թույլ է տալիս հաստատել, որ սեռային տարբերությունները համակարգված կերպով արտացոլվում են բարբառային հայերենի բառապաշարում՝ ընդգրկելով

կյանքի գրեթե բոլոր ոլորտները: Բառապաշարի սեռային առանձնահատկությունները, որոնք արտահայտվում են առանձին բառային միավորներով, պայմանավորվում են հասարակության ավանդական պատկերացումներով, բարբառախոս համայնքի առօրյա կյանքով և հասարակական հարաբերությունների ներկա վիճակով: Բարբառային բառապաշարը շատ դեպքերում ներկայացնում է ոչ միայն իրականությունը, այլև ընկալումները և դրա նկատմամբ դրական կամ բացասական վերաբերմունքը: Մեռային տարբերակումը գրանցում է տղամարդկանց ուժն ու կարողությունները, կանանց գեղեցկությունը և նրանց մասին ընկալումները: Ավանդական հասարակությունը, սակայն, զուսպ է դրական հատկանիշները ներկայացնելիս, բայց բավականին պերճախոս է թերությունները արձանագրելիս: Նմանատիպ երևույթ նկատվել է նաև հայկական ասացվածքներում: Մեռային տարբերությունն ավելի մեծ է բարոյահոգեբանական բնութագրերի դեպքում: Եթե կանանց առումով բառային միավորները արտացոլում են համեստություն, բարձր բարոյական կերպար, ինտելեկտ և զսպվածություն, ապա տղամարդկանց դեպքում կարևոր են տղամարդուն վայել լավագույն մարդկային որակները, տղամարդկային խառնվածքի և բնավորության դրսևորումները: Բացասական երանգով բառապաշարը ներկայացնում է հանրության համար անընդունելի իրականություններ: Ե՛վ տղամարդկանց, և՛ կանանց դեպքում խստիվ դատապարտվում են բարոյական անկումն ու շեղումները, անպարկեշտությունը, անզուսպ վարքագիծը, տղամարդկանց շրջանում՝ կանացիությունը, հարբեցողությունը և անփութությունը, կանանց շրջանում՝ վատ տնտեսվարումը և անփութությունը և այլն: Մեռերի դիրքն ու կարգավիճակը արտացոլող բառապաշարը նրանց ներկայացնում է ընտանիքում և հասարակությունում ամենաբազմազան հարաբերություններում՝ անհրաժեշտության դեպքում ընդգծելով տղամարդկանց գերիշխանությունը: Սակայն բառապաշարը նաև արտացոլում է կանանց նկատմամբ հարգանքը, որը ավանդաբար բնորոշ է եղել հայ հասարակությանը: Ամուսնական կյան-

քին և հարաբերություններին վերաբերող բառապաշարում որոշակիորեն արտացոլվում է տղամարդկանց գերիշխող դերը, կանանց վերաբերող բառապաշարում առանձին խումբ են կազմում ծննդաբերությունն ու երեխայի խնամքը արտացոլող բառերը: Մարդկանց զբաղմունքներին և հմտություններին առնչվող բառապաշարում կանանց վերաբերող բառերը հիմնականում ներկայացնում են տանը կատարվող աշխատանք և զբաղմունքներ, իսկ տղամարդկանց վերաբերող բառերը՝ դրսում կատարվող աշխատանք և զբաղմունքներ: Տղամարդկանց վերաբերող բառապաշարը նաև ներկայացնում է արհեստների և զինվորական ծառայության մենաշնորհը: Տղամարդկանց և կանանց առօրյա կյանքին և վարքին վերաբերող բառապաշարը ներառում է տարբեր իրականություններ՝ արտացոլելով սեռերի միջև եղած տարբերությունները՝ պայմանավորված թե՛ հոգեկան աշխարհով, թե՛ սոցիալական դիրքով և պատկերացումներով: Որոշակի տեղաշարժերից անկախ՝ հագուստի և հարդարանքի սեռային տարբերությունները դեռևս շատ ուժեղ և կայուն են: Ավանդական հասարակության լեզվի սեռային բառապաշարի դիտարկումը հաստատում է այն տեսակետը, որ հայկական իրականության մեջ տղամարդու սեռային իդեալը ենթադրում է ուժ, համառություն, ազնվություն, նախաձեռնողականություն և իշխող որակներ, իսկ կնոջ վարքի սեռային իդեալը բնութագրվում է նրբանկատությամբ, հնազանդությամբ, պարկեշտությամբ, փոխզուգումով, ընտանիքին հավատարմությամբ և այլն:

**Կատվայան Վ., Խաչատրյան Հ., Բառնապյան Ջ., Ղարիբյան Ա.,
Հոգսոն Կ., Քումունց Մ., Ընտանի կենդանիները հայկական
ասացվածքներում. ճանաչողական մոտեցում (հոդված/անգլերեն)**

Հոդվածագիրները Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի խոսվածքներում գործածվող առածների ընձեռած նյութի շրջանակում դիտարկում են ընտանի կենդանիների բնութագրերը

հայ լեզվամտածողության մեջ՝ հիշատակելով նաև այլ ժողովուրդների ընկալումներ, ցույց տալով ընդհանրություններ ու տարբերություններ: Դիտարկված 340 առածներում հանդիպում են ընտանի 15 կենդանիների անուններ, և ըստ դրսևորման հաճախականության՝ առաջին եռյակում են էջը, շունը և կով//եզ//հորթ խումբը: Այնուհետև հաջորդում են հետևյալ կենդանանունները՝ ոչխար և գառ, ձի, այծ և ուլ, կատու, ուղտ, գոմեշ, ջորի, խոզ: Հիմք ընդունելով առածներում առկա տեղեկությունները իբրև մարդկանց ճանաչողության արտահայտություն՝ հիշյալ կենդանիների բնութագրերը ներկայացվում են ըստ նրանց վարքագծի ու արտաքինի, ըստ կենդանի-մարդ և կենդանի-կենդանի հարաբերությունների: Առածներում կենդանիների համար բնութագրական հատկանիշները վերաբերում են մարմնի մասերին, արտաքինին, վարքին, խառնվածքին, գործառույթին, օգտակարությանը, սննդին, ապրելավայրին և այլն: Զուգահեռաբար արտահայտվում է նաև ընտանի կենդանիների հանդեպ մարդկանց վերաբերմունքը, որը տարբերակված է: Նկատելի է, որ դրական վերաբերմունքի արժանանում են այն կենդանիները, որոնք սննդի աղբյուր են, տնտեսական բնույթի գործառույթ ունեն, բայց և վարքի ու խառնվածքի անցանկալի հատկանիշներ չունեն: Բացասական վերաբերմունքի պատճառ են անօգտակարությունը, հիմարությունը, ագրեսիվությունը, անհնազանդությունը, գողությունը, համատությունը, անմաքրասիրությունը և այլն: Շիրակի առածներում, այլ ժողովուրդների առածների համեմատությամբ, կենդանանունների հաճախականության և կենդանիների նկատմամբ մարդկանց վերաբերմունքի և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ կան: Երկու դեպքում էլ դեր են խաղում այնպիսի գործոններ, ինչպիսիք են շրջակա միջավայրը, տնտեսական գործունեությունը, կենցաղը, սովորույթները, հավատալիքները, շփումները և այլն:

**Կատվալյան Վ., Ղարիբյան Ա., Հովհաննիսյան Ն., Վարդանյան Ա.,
Մխիթարյան Գ., Ֆ. Ռիվոլայի «Բառագիրք հայոց. Dictionarium
armeno - latinum» աշխատությունը /1621/. Հայերեն առաջին
տպագիր բառարանում ազգերին և երկրներին վերաբերող
բառապաշարի վերլուծություն (հոդված/անգլերեն)**

Հոդվածում միջգիտակարգային դիտանկյունով հետազոտվում է 16-17-րդ դարերի իտալացի հայագետ Ֆրանցիսկո Ռիվոլայի «Բառագիրք հայոց. Dictionarium armeno - latinum» աշխատությունը (1621), որը ինչպես հայ, այնպես էլ հայ-լատիներեն բառարանագրության պատմության կարևոր իրադարձություններից է, առաջին հայերեն տպագիր բառարանը: Ռիվոլան իր բառարանի նյութը քաղել է ինչպես հայերեն գրավոր աղբյուրներից, այնպես էլ Հայաստանի տարբեր վայրերից եկած և իր շրջապատի հայերի կենդանի խոսքից, որի շնորհիվ բառարանում գուժորդվում են հայերենի գրական/գրաբարյան/ և խոսակցական/բարբառային/ տարբերակներ, և աշխատանքը ձեռք է բերում նաև հայերենի բարբառագիտական առաջին բառարանի նշանակություն:

Ռիվոլայի՝ 17-րդ դարասկզբին գրված բառարանը ընդգրկած բառանյութով հիմնականում արժանահավատ տեղեկություններ է պարունակում ինչպես ժամանակի բազմաթիվ երկրների ու ժողովուրդների, այնպես էլ անցյալի շատ իրողությունների վերաբերյալ: Հատկապես շատ են հայ իրականությանը, ազգային նկարագրին, աշխարհագրական միջավայրին առնչվող բառերը, գավառների ու քաղաքների անվանումները: Երկրի, ազգության ու լեզվի, բնակավայրերի անվանումներից գատ շատ են հավատին, կրոնական ու պատմական իրողություններին ու դեմքերին, նաև էպոսին, բանահյուսությանն առնչվող հիշատակումները, որի շնորհիվ ոչ միայն ուրվագծվում է ժամանակի հայության /համենայն դեպս՝ նրա մի հատվածի/ հետաքրքրությունների, պատկերացումների ու իմացության շրջանակը, այլ նաև հաղորդվում են տարբեր բնագավառների վերաբերյալ կարևոր տեղեկություններ: Մյուս կողմից՝ թե՛

տեղանունները, թե՛ առկա լեզվական հատկանիշները թույլ են տալիս ենթադրաբար որոշել Ռիվոլայի հիմնական ինֆորմանտների բնօրրանը, որը պետք է ընդգրկելիս լինի պատմական Հայաստանի կենտրոնական՝ Վասպուրական-Մուշ-Այրարատ տարածաշրջանը/ներառյալ Ջուղան/: Ըստ հողվածագիրների՝ շատ դեպքերում բառարանի տեղեկությունները աղերսներ ունեն արդի բարբառային հայերենում արտացոլված իրողությունների ու պատկերացումների, ժողովրդի մեջ դեռևս պահպանվող ավանդությունների ու գրույցների հետ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայ իրականության զարգացման ու շարունակականության դիտարկման տեսանկյունից: Բառարանում որոշակիորեն արտացոլված է նաև հայկական միջավայրի և անցյալի վերաբերյալ եվրոպացիների տեղեկացված լինելը, հատկապես երբ Ռիվոլան լատիներեն հատվածում լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում բնակավայրի, անձի կամ այլ իրողության մասին: Միաժամանակ, 16-րդ դարավերջի և 17-րդ դարակզբի եվրոպացի ճանապարհորդների ուղեգրությունների տեղեկությունները հիմնականում համընկնում են Ռիվոլայի ներկայացրած նյութին: Բառարանում բավականաչափ տեղեկություններ կան հարևան երեք ժողովուրդների՝ պարսիկների, թուրքերի և վրացիների վերաբերյալ, չկա որևէ հիշատակություն ադրբեջանցիների, նրանց լեզվի կամ երկրի մասին: Ընդհանուր առմամբ հիշատակված են տարածաշրջանի գրեթե բոլոր ժողովուրդներն էլ՝ որպես կանոն ազգի, երկրի և լեզվի անվանումներով: Նրանցից շատերի հետ շփումների արձագանքները պահպանվել են բարբառային հայերենի բառապաշարում: Բավականին ընդարձակ են արաբներին, հույներին, հրեաներին վերաբերող բառախմբերը: Ասիական, աֆրիկյան ու եվրոպական ժողովուրդների ու երկրների մասին հիշատակումները թերևս արտացոլում են առևտրատնտեսական հարաբերությունների պատկերը, մասնավորապես՝ 16-17-րդ դարերի հայ-հնդկական առևտրական աշխույժ հարաբերության մասին են վկայում հնդկական իրականությանն առնչվող շատ բառեր, որոշակիորեն սերտ են եղել

նան հարաբերությունները եթովպացիների հետ: Հոդվածագիրները փաստում են, որ եվրոպական ժողովուրդներին ու երկրներին առնչվող հիշատակումները սովորաբար սահմանափակվում են երկու-երեք բառով՝ հավանաբար պայմանավորված տնտեսական կապերի թուլությամբ: Թերևս բացառություն է Իտալիան, որտեղ ձևավորվել էր տնտեսական ակտիվ գործունեություն ծավալած ուժեղ գաղութ, որն էլ կարևոր նախապայման է եղել Ռիվոլայի բարաանի ստեղծման համար:

Կատվայյան Վ., Մաշտոցյան ուղղագրության մի շարք առանձնահատկությունների արտացոլումը արդի հայ բարբառների հնչյունական համակարգերում (հոդված/ռուսերեն)

Ըստ հոդվածագրի՝ աշխատանքի նպատակն է վեր հանել մաշտոցյան ուղղագրության որոշ առանձնահատկությունների արտացոլումը արդի հայ բարբառների հնչյունական համակարգերում, նաև դրանց միջոցով կատարել որոշ դիտարկումներ դասական ուղղագրության առանձին խնդիրների վերաբերյալ: Մաշտոցը չէր կարող ծանոթ չլինել ժամանակի բարբառային հայերենի տարբեր դրսևորումներին, և այդ հանգամանքը անշուշտ ունեցել է իր դերը ընդհանուր հայերենյան հնչյունական համակարգը այբուբենում լիարժեքորեն արտացոլելու գործում: Հոդվածագրի համոզմամբ՝ պատահական չէ, որ մաշտոցյան ուղղագրության մի շարք առանձնահատկություններ հնարավոր է բացատրել արդի կենդանի բարբառային խոսքի իրողություններով: Դիտակետում ունենալով Բայազետի, Մշո, Վանի, Դիադինի, Արարատյան բարբառների հնչյունական իրողությունները՝ անդրադարձ է կատարվում մաշտոցյան ուղղագրության՝ բարբառային առկա նյութով բացատրելի որոշ խնդիրների: Մասնավորապես, դիտարկելով հինհայերենյան *է* և *է* գրերի փոխհարաբերությունները, հոդվածագիրը կարևորում է այն հանգամանքը, որ *է*, *է* տառերը տարբեր հնչույթներ էին ներկայացնում շեշտակիր վանկում. մյուս դիրքերում հակադրությունը

չեզոքանում էր, և տառերից ամեն մեկը հանդես էր գալիս միայն իրեն հատուկ դիրքերում: Հոդվածագրի վկայությամբ Բայազետի բարբառի *է, է* միավորները իրենց բաշխման յուրահատկություններով գրաբարյան *է, է* միավորների նկատմամբ հանդես են բերում կայուն և որոշակի համապատասխանություններ: Հոդվածագիրը եզրակացնում է, որ գրաբարյան թե՛ *է-ն*, թե՛ *է-ն* տարբեր էին արդի հայերենի *ե* պարզ ձայնավորից, ընդ որում՝ այդ պնդումը ճիշտ էր շեշտակիր վանկի համար, որում *է-է* հակադրությունը պայմանավորված էր ինչպես հնչյունական միջավայրով, այնպես էլ ծագունաբանական գործոններով ու իմաստատարբերական պահանջով: Ենթադրվում է, որ հին հայերենն ուներ փակվող *է* և բացվող *է* երկբարբառակերպներ, ուստի գրաբարյան շեշտակիր վանկում *է* և *է* գրերով արտահայտվող հակադրությունը փակվող և բացվող երկբարբառակերպների հակադրություն էր: Հոդվածում քննվում նաև Բայազետի բարբառում բառասկզբում ձայնեղ պայթականներով ու հպաշփականներով ձևավորված բաղաձայնական գուգորդումները, դրանք համեմատվում են գրաբարյան համապատասխանությունների հետ: Բաղաձայնական խմբերի ձևավորման օրինաչափությունների նույնությունը հիմք է դառնում ընդունելի համարելու այն տեսակետը, ըստ որի՝ գրաբարում բառասկզբում գործածվել են շնչեղ ձայնեղ հպականներ ու հպաշփականներ:

Մեսրոպեան Հ., Պօղոսեան Ա., «Մասնայ ծոեր» հերոսավէպը և բարբառագիտական տառադարձութեան նորագոյն միջոցների կիրառման անհրաժեշտութիւնը պատումները վերահրատարակելիս (հոդված)

Յօդուածում ներկայացում են «Մասնայ ծոեր» հերոսավէպին առնչակից լեզուական մի շարք հարցեր: Յայտնի է, որ գրականագետ-բանագետների ուսումնասիրութեան խնդրից դուրս է էպոսի պատումների լեզուական առանձնայատկութիւնների, բարբառային տարածքի կամ բարբառագիտական յատկանիշների բացայայտումը, առանց որոնց ժողովրդական վէպի մասին ասելիքը մնում է

թերի: Բանահաւաքներին և բանագէտներին հիմնականում հետաքրքրել են վէպի տարածման սահմանները, որոնց վերաբերեալ էլ հարցեր են տրուել ասացողներին: Այդ սահմանները կարևոր գործօն են յատկապէս տուեալ պատումի բարբառային պատկանելութիւնը որոշելու, հնչիւնական, քերականական, բառապաշարային իրողութիւնները տարբերակելու, դասակարգելու և ճշգրտելու համար:

Էպոսի պատումների լեզուական հիմնաւոր քննութիւնն անհրաժեշտութիւն է, քանի որ բանահիւսական հարուստ և վստահելի նիւթերի հիման վրայ հնարաւորութիւն է ընձեռում ամբողջականացնելու մեր հայրենիքի կենտրոնական շրջանների բարբառային համապատկերը:

Արծարծուած են նաև պատում- ասացող - բարբառային տարածք եռամիասնութեան խնդրին, էպոսի գրառման առանձնայատկութիւններին և դժուարութիւններին, գիտական տառադարձութեանը և համահաւաք տեքստին վերաբերող հարցեր:

Յօդուածագիրները նշում են, որ ներկայումս բարբառային տեքստերը գրառում և ուսումնասիրում են մշակուած բարբառագիտական տառադարձութեամբ: Արևմտահայութեան կորսուած բնօրրանում գրառուած պատումները ճշգրտուած տառադարձութեամբ վերահրատարակուելու կարիք ունեն:

**Մեսրոպեան Հ., Համբարձումեան Ս., Արևմտահայ բարբառները
հայ եկեղեցու հովանու ներքոյ. Գարեգին Սրուանձտեանց
(հոդված)**

Յօդուածում ներկայացում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպագրած բարբառային գրականութիւնը, որը բաժանում է երկու հիմնական ուղղութիւնների՝ ա) «Արարատ», ապա և՝ «Էջմիածին» հանդէսում կամ «Շողակաթ Ս. Էջմիածնի» հայագիտական ժողովածուում զետեղուած բարբառային նիւթեր և բ) բարբառային մենագրութիւններ:

ա) «Արարատի» բարբառային նիւթերը գրանցուած են դեռևս XIX-XX դարի սկզբին, երբ բարբառախօս հայ ժողովուրդն ապրում էր բնօրրանում: Մի շարք բարբառային տեքստերի հեղինակները կամ գրառողները յաճախ ճեմարանականներն էին:

բ) Գարեգին վարդապետ Յովսէփեանը գրի է առել «Սասնայ ծոեր» էպոսի նոր պատումներ, նաև Մոկաց բարբառի տարբեր նմուշներ, որոնք ամփոփել է «Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից» ժողովածուում: Մայր Աթոռի բարբառագրական աշխատանքը համալրել են Սարգիս Հայկունին, Մահակ վարդապետ Ամատունին («Հայոց բառ ու բան»), ինչպէս նաև Գարեգին էպիսկոպոս Սրուանձտեանը:

Բարբառով գրուած մենագրութիւններից են Գ. Սրուանձտեանցի «Գրոց ու բրոց և Սասունցի Դաւիթ կամ Միւրի դուռ», «Սանանայ», «Համով-հոտով» և այլն:

Ապրելով և աշխատելով արևմտեան տարածքի մի շարք բարբառախօս վայրերում՝ Գարեգին էպիսկոպոս Սրուանձտեանը հաղորդակից է դառնում արևմտահայութեան կեանքին, նաև տիրապետում էր Մուշի, Տիգրանակերտի, Կարնոյ, Պոլսի, Սեբաստիայի, Բաղէշի, Խարբերդի, Ակնի, Ամասիայի, Եւրոկիայի, Տրապիզոնի, Համշէնի բարբառներին: Քանի որ կազմել է Չարսանջակի, Չմշկածագի, Բալուի եւ Սալաթիայի վիճակագրութիւնները, քաջածանօթ էր նաեւ արևմտահայերէնի տարածքային այդ տարբերակներին:

Մեսրոպեան Հ., Հայ ժողովրդի բռնի տեղահանութիւնները լեզուամշակութային արժէքների խաթարման պատճառ (հողոված)

Յօդուածում ներկայացում են բռնի տեղահանութիւնների պատճառով բարբառային հայերէնի լիովին փոխուած աշխարհագրութիւնը և լեզուական համապատկերը: Բարբառախօս բնօրրանից տարագրուած հայութեան հոծ զանգուածներ 1915 թ. սփռում են աշխարհով մէկ՝ աստիճանաբար մոռանալով մայրենի բարբառը:

Ըստ այսմ՝ հայերենի բարբառները բաժանում են երկու հիմնական խմբի՝ ա) կորուսեալ բարբառներ և բ) բնօրրանից դուրս խօսուող բարբառներ:

Հայրենագրկման պատճառով աստիճանաբար մոռացուել են Կեսարիայի, Արաբկիրի, Մալաթիայի, Սեբաստիայի, Վանի, Երզրնկայի, Տիգրանակերտի, Շապին-Գարահիսարի, Ակնի, Նիկոմեդիայի, Զեյթունի, Հաջրնի, Մարաշի, Խարբերդի, Շատախի, Մոկսի, Ոզմի, Չմշկածագի, Խոտորջուրի, Եւդոկիայի, Նախիջեւանի, Ագուլիսի, Տղնայի, Շամախու և այլ բարբառներ:

Բնօրրանից դուրս կենսունակ են Մուշի, Սասունի, Կարնօ, Նոր Նախիջեւանի, Խոյի, Ղարաբաղի բարբառները:

Յօդուածում ներկայացում է նաև հայերենի բարբառների ներկայ իրավիճակը՝ Թուրքիայում կատարուած դաշտային աշխատանքների հիման վրայ. հարցումներ են իրականացուել բազմաթիւ վայրերում (Ադրիանապոլիս, Ռոդոսքօ, Մալկարա, Ստամբուլ, Նիկոմեդիա, Բուրսա, Նիկիա, Սուեդիա, Այնթապ, Ադանա, Եդեսիա, Գամիրք, Կեսարիա, Անկարա, Էրզրում, Երզնկա, Ամասիա, Մալաթիա, Վան, Մուշ, Կարս և այլն):

Մեսրոպյան Հ., Համբարձումյան Ս., Շիրակի խոսվածքի բուսանուններն ըստ Ա. Մխիթարյանցի բառարանի (հոդված)

Հոդվածում ներկայացվում են Կարնո բարբառի Շիրակի խոսվածքի մի շարք բուսանուններ, որոնք 20-րդ դարասկզբին գրի է առել ալեքսանդրապոլցի Ա. Մխիթարյանը: 1901 թ. «Էմինեան ազգագրական ժողովածուի» առաջին հատորում Գ. Խալաթյանը զետեղում է Ա. Մխիթարյանցի «Փշրանք Շիրակի ամբարներից» բարբառային նիւթերի հաւաքածուն՝ խոսվածքի բառարանով: Բառարանում ընդգրկված բուսանուններն ունեն ուշագրավ լեզվակառուցվածքային, բառիմաստային առանձնահատկություններ: Մի շարք բույսեր ունեն նաև խորհրդանշական, սնտիապաշտական, դավանաբանական, արվեստաբանական բովանդակություն,

որոնք էլ բուսանունների փոխաբերացման ու տարածման, դարձվածային միավորներ կազմելու պատճառ են դառնում: Վկայաբերված բուսանունների միջոցով պատկերացում է կազմվում Շիրակ աշխարհի բնապատկերի, Շիրակի դաշտի բուսականության, խոսվածքի նախնական վիճակի, բանասացների լեզվամտածողության, ազգային ավանդույթների, տոների և ծեսերի խորհրդաբանության մասին:

Բուսանունները բաժանված են մի քանի հիմնական խմբերի. 1) ներկայումս Շիրակի խոսվածքում գործածվող, 2) Շիրակի բարբառակիրներին հայտնի հայերեն կամ փոխառյալ բուսանուններ, 3) բուսանուններով բաղադրված հարադրություններ և այլն:

Մեսրոպյան Հ., Ռշտունիքի բարբառային հայերենի ընդհանուր բնութագիրը (ըստ ոշտունցիների պատմած ժողովրդական հեքիաթների) (հոդված)

Հոդվածում ներկայացվում է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Ռշտունիք գավառի բարբառային հայերենը՝ հնչյունաբանությամբ և քերականական կառուցվածքով: Ըստ Գ. Ջահուկյանի դասակարգման՝ Վասպուրականի տարածքը պատկանում է բարբառների արևմտյան խմբակցությանը, Վանի բարբառ ընդհանուր անունն ունեցող ենթախմբի մեջ՝ Մոկսի, Շատախի, Բաստի, Ոզմի, Վան քաղաքի և Դիադինի ենթաբարբառներով, իսկ Ռշտունիքի տարածքն առանձին բնութագրված չէ: Հայ ժողովրդական հեքիաթների XX հատորը պարունակում է Ռշտունիք գավառի հայերեն բանավոր խոսքի տարբեր դրսևորումներ՝ գրառված այդ տարածքի գյուղերի նախկին բնակիչներից, որոնց անվանում էին վրռըշիկներ: Ժողովածուի մեջ ընդգրկված հեքիաթներն ունեն թե՛ ընդհանուր հայերենին վերաբերող բառաշերտ, թե՛ միայն բարբառին հատուկ հնչարտաբերությամբ բառերի որոշակի խումբ, քերականական ձևեր, դարձվածային, նկարագրական կառույցներ, որոնց էլ հոդվածագիրն անդրադարձնում է: Ռշտունիքի լեզվական հաղորդակցության հիմնական միջոցը քննվում է ըստ ՀՀ ԳԱԱ հնագիտության և

ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեքստաբանության բաժնի կազմած «Հայ ժողովրդական հեքիաթների» XX հատորի: Դիտարկվում են հնչյունական զուգաբանությունները, ձայնավորական, բաղաձայնական հատկանիշները, քերականական զուգաձևությունները և այլ առանձնահատկություններ:

Մեսրոպեան Հ., Պօղոսեան Ա., Լեզուական դիտարկումներ հայոց դիցազնավեպի շուրջ (յօրուած)

Յօրուածում քննուում են «Սասնայ ծռեր» էպոսի պատումների լեզուական ակնառու յատկանիշները: Գրառուած տարբերակների հրատարակութեան համար հիմք է ծառայել բնագրագիտական մշակուած եղանակը՝ չորս հիմնական դրոյթներով: Յոյս կայ, որ ժամանակի ընթացքում հայ էպոսագիտութեան մէջ եւս կձեւաւորուի համեմատական պատումաբանութիւն գիտակարգ, որի շնորհիւ հնարաւոր կդառնան տարբեր բարբառներով գրառուած փոփոխակների լեզուական յատկանիշների առանձնացումն ու զուգադրումը:

Հայ ժողովրդական էպոսի՝ մեզ հասած պատումներն ունեն տարբեր վերնագրեր՝ «Սասնայ ծռեր», «Սասնայ տուն», «Ջոջանց տուն», «Տղայ Դաւիթ», «Թլօլ Դաւիթ», «Սասնայ փահլիւաններ կամ Թլօր-Դաւիթ» և այլն, որոնք սովորաբար տալիս են բանասացը, երբեմն էլ գրառողը: Սասնայ // Սասնայ // Սասունայ ծռեր խորագրով գրառուած է 15 պատում: Մի շարք բանասացներ յիշատակում են *Դաւիթ* անձնանունով բաղադրուած վերնագրեր: Այսպէս՝ *Սասուն* տեղանունան քերականական ձեւեր + *Դաւիթ* կառոյցի վերնագրերով պատումներից են՝ «Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ» (Մուշի եւ Բաղէշի խօսուածքային տարբերակով), «Սասունայ Դաւիթ» (Խլաթի բարբառով), «Սասունցի Դաւիթ» (Շատախի բարբառով), «Սասնայ Դաւիթի հեքիաթ» (Շատախի բարբառով): *Դաւիթ* + *Մհեր* հայր եւ որդի ազգակցական կապ նշող անձնանուններով

տարբերակներ են՝ «Դաւիթ եւ Մհեր» (Մոկսի, Շատախի, Արարատեան բարբառներով): *Դաւիթ* անձնանունով, *տղայ*, *թլօր* որոշիչներով, ինչպէս նաեւ այլ բաղադրիչներով են կերտուած ստորեւ բերուող տարբերակները՝ «Տղայ Դաւիթ եւ աղջիկ Խանդուտի հէքիաթը» (Վանի բարբառով), «Մասմայ փահլիւաններ կամ Թլօր Դաւիթ եւ Մհեր» (Մոկսի բարբառով), «Թլոլ Դաւիթ» (Սպարկերտի եւ Վանի բարբառի խառն խօսուածքով), «Թլուատ Դաւիթ» (Մոկսց բարբառով), «Թլօլ Դաւիթի հէքիաթ» (Վանի բարբառի Հայոց Ձորի խօսուածքով), «Թլօր Դաւիթ եւ Մհեր» (Վանի բարբառի Գաւաշի խօսուածքով), «Դաւթի եւ Վհաբի կոբի» (Շատախի բարբառով), «Դաւթի կոբի Մըսրամելիքի հետ» (Շատախի բարբառով):

Տուն, տուեալ դէպքում *հայրենիք*, *երկիր*, *Սասուն աշխարհ* նշող հիմնական բաղադրիչով են՝ «Մասմանց տուն» (Մոկսի բարբառով), «Մասմանց տուն» (Սպարկերտի բարբառով), «Մասմանց տուն» (Վանի բարբառով, անտիպ), «Մասնայ տուն» (Վանի բարբառով), «Ձոջանց տուն» (Մոկսի բարբառով), «Ձոջանց տուն կամ Մասմայ ծոեր» (Վանի բարբառի Գաւաշի խօսուածքով), «Ձոջանց տուն (Թլիորիկ) կամ Վաթան եւ Սասուն» (Սասունի բարբառով): Այլ վերնագրերով են՝ «Մանասար եւ Բաղդասար» (Մոկսի և Վանի Գաւաշ գիւղի բարբառային հայերէնով), «Հայ թագաւորին աղջիկը եւ թաթար Ղազան խան», «Մասնայ փահլիւաններ» (Մոկսի բարբառով): Ինչպէս ցոյց են տալիս օրինակները, քանակապէս գերակշռում են *Սասուն* (+*ծուռ*, *տուն*, *Դաւիթ* եւ այլն) տեղանունով բաղադրուած վերնագրերը: Յաջորդ տեղում է *Դաւիթ* (+*Սասունցի*, *Մհեր*, *տղայ*, *թլօր*, *կոբի* եւ այլն) անձնանունով կերտուած խորագիրը:

Յօդուածագիրներու կարծիքով՝ մերոպեան ուղղագրութեան աղաւաղուած, վատթար տարբերակով հրատարակուած պատումներն այսօր նորովի հրատարակութեան կարիք ունեն:

Մեսրոպյան Հ., Ռուսաստանի հայոց թեմի դերը հայ բարբառագիտության զարգացման գործում (հոդված)

Հոդվածում ներկայացվում է Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի ներդրումը ի նպաստ հայ բարբառագիտության զարգացման: Թեմի հայերի կյանքում նշանակալից է Հովհաննես Լազարյանի հիմնադրած արևելյան լեզուների ուսումնական հաստատությունը, որտեղ դրվում են հայ բարբառագիտության հիմքերը: Լազարյան ճեմարանի շրջանավարտ Ք. Պատկանյանը հեղինակում է պատմաբանասիրական աշխատություններ, հայերենի տարբեր բարբառների նվիրված ուսումնասիրություններ: Նա բարբառագիտությունն ընդգրկում է համալսարանում դասավանդվող առարկաների շարքում, առաջարկում է բարբառագիտական կարևոր դրույթներ, կատարում բարբառների գիտական դասակարգում: Ռուսաստանի հայոց թեմի հովանու ներքո լույս են տեսնում «Էմինյան ազգագրական ժողովածուն», Ս. Ամատունու «Հայոց բառու բանը», Հ. Աճառյանի «Հայերեն գաւառական բառարանը» և «Հայ բարբառագիտութիւն» աշխատությունը և այլն: Ճեմարանի բարբառակիր սաները գրառում են իրենց մայրենի բարբառը, կազմում բարբառային բառարաններ, կատարում բարբառային ուսումնասիրություններ: Մոսկվայում առաջին անգամ ստեղծվում է հայերենի բարբառագիտական ատլաս և մշակվում համապատասխան գիտական տառադարձություն: Հայ բարբառագիտության ռուսաստանյան դպրոցի անվանի ներկայացուցիչներից են նաև Լևոն Մսերյանցը, Ս. Մարգարյանցը, Գ. Ջալաշյանը և այլք:

Մեսրոպյան Հ., Հայ-ռուս-վրաց-քուրդ լեզվամշակույթը Հովսեփ Օրբելու բարբառային հետազոտություններում (հոդված)

Մի շարք լեզուների գիտակ Հովսեփ Օրբելին հիմնականում հայտնի է որպես արևելագետ-պատմաբան, հնագետ, վիմագրա-

գետ: Օրբելու բանահավաքչական, բառարանագրական, բարբառագիտական ու քրդագիտական աշխատանքները մասնագետներին հասու են դարձել իր մահվանից քառասուն տարի հետո: Օրբելու մայրենի լեզուն հայերենն էր, ծննդավայրի ու նախնական կրթության միջավայրը՝ վրացական էր, Սանկտ-Պետերբուրգում ստացած համալսարանական կրթությունը՝ ռուսական: Նրա գիտական ղեկավարը Ն. Մառն էր, որի մայրենին վրացերենն էր: Օրբելի գիտնականի հասունացումը տեղի է ունենում հայերենի, վրացերենի, ռուսերենի լեզվամշակույթների միջավայրում ու անմիջական ազդեցությամբ:

Սոկսում կատարած բանահավաքչական գործուղման ընթացքում սովորում է տեղի հայերի ու քրդերի բարբառները, հավաքում արժեքավոր բանահյուսական նյութեր և կազմում բառարաններ: Սոկսի բարբառային նյութերի մշակումը և հրատարակությունը իրականանում է հայերենի, ռուսերենի և քրդերենի լեզվական միջոցների համադրմամբ:

Սարգսյան Ա., Մինասյան Շ., Արցախի (Ղարաբաղի) բարբառը և բանահյուսությունը XIX դարի սկզբնաղբյուրներում և ուսումնասիրություններում (հոդված)

Հոդվածագիրները նշում են, որ Արցախի (Ղարաբաղի) բարբառն ու բանահյուսությունը բազում դարերի պատմություն ունեն, սակայն լուրջ գրառումներ և ուսումնասիրություններ կատարվել են XIX դ. երկրորդ կեսից սկսած: Արցախի ոչ նյութական մշակույթի այդ կարևոր բնագավառներում իրենց ներդրումն են ունեցել ժամանակի նշանավոր լեզվաբաններ, բանահավաքներ, մանկավարժներ Առաքել Ալեքսանյր, Գրիգոր և Ավետիք Բահաթրյանները, Քերովբե Պատկանյանը, Ղազարոս Աղայանը, Գալուստ Շերմազանյանը, Մակար Բարխուդարյանը, Կոնստանդին Մելիք-Շահնագարյանը, Երվանդ Լալայանը, Խաչիկ և Արամ Դադյանները, Միքայել Տեր-Հովհաննիսյանը, Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Ա-

ճառյանը, որոնց գրառումների և ուսումնասիրությունների մի մասը 1860-90-ական թթ. և հետագայում հրատարակվել է առանձին գրքերով, տարբեր հանդեսներում ու համահավաք ժողովածուներում, իսկ մի մասը դեռևս անտիպ է և պահվում է որոշ արխիվներում ու թանգարաններում: Բացի դրանից՝ ռուսերեն գրաված բանահյուսական որոշ նյութեր են ընդգրկված Կովկասյան ուսումնական օկրուգի՝ Թիֆլիսում հիմնադրած «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (СМОМПК) հանդեսի տարբեր համարներում, որոնց հեղինակները Արցախի տարբեր բնակավայրերի դպրոցների ուսուցիչներն ու տեսուչներն էին: Այդ բոլոր գրառումները, ժողովածուները, ուսումնասիրությունները լուրջ սկզբնաղբյուրներ են Արցախի բարբառի ու բանահյուսության ուսումնասիրության բնագավառում և կարևոր դեր են ունեցել բարբառագիտական, բանահավաքչական, բանագիտական հետազա աշխատանքների համար:

Սարգսյան Ա., Մինասյան Շ., Ղարաբաղի բարբառ. արդի վիճակը և պահպանման հեռանկարները (հոդված)

Հոդվածագիրներն արժևորում են այն, որ Ղարաբաղի բարբառը հայերենի կենդանի բարբառներից ամենատարածվածն ու կենսունակն է, որով, ըստ տարբեր լեզվաբանների կարծիքների, հաղորդակցվում են 500000-1000000 հայեր, որոնք ապրում էին Արցախի Հանրապետությունում և ապրում են Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում: Այն առանձնանում է իր հնչյունաքերականական յուրահատկություններով և հարուստ բառապաշարով: Սակայն դարերի ընթացքում և հատկապես վերջին տասնամյակներում, միասնականացնող հանգամանքներով պայմանավորված, բարբառն աստիճանաբար ենթարկվել է գրական արևելա-հայերենի և ժողովրդախոսակցական լեզվի խիստ ազդեցությանը՝ կորցնելով մի շարք առանձնահատկություններ: 2020թ. 44-օրյա պատերազմից և հատկապես Արցախի ողջ բնակչության՝ 2023 թ.

բռնի տեղահանումից հետո այդ գործընթացը լուրջ մարտահրավեր է: Հոդվածում վեր են հանվում բարբառի հնչյունական, քերականական և բառապաշարային մակարդակներում կատարված փոփոխությունները, որոնք վկայում են, որ հայերենի մյուս բարբառների նման արցախահայերի հաղորդակցման հիմնական միջոցը զարգացման հեռանկարներ չունի և ի վերջո դատապարտված է վերացման: Միաժամանակ ներկայացվում են բարբառի՝ որպես Արցախի ոչ նյութական մշակույթի պահպանման հեռանկարները, կարևորվում այն ուսումնասիրելը, բարբառով բանահյուսական և ազգագրական նյութեր հավաքելը, Արցախի ժողովրդագիտությանը նվիրված գիտաժողովներ, գիտական քննարկումներ, մշակութային և տարաբնույթ այլ միջոցառումներ կազմակերպելը, գիտական ու գիտահանրամատչելի աշխատություններ և ժողովածուներ հրատարակելը:

**Սարգսյան Ա., Մինասյան Շ., Արցախի ազգագրությունը,
բանահյուսությունը և բարբառը XIX դարի երկրորդ կեսի
ռուսական հրատարակություններում (հոդված)**

Հոդվածում ներկայացվում են XIX դարի երկրորդ կեսի ռուսական հրատարակություններում ընդգրկված ուսումնասիրությունները, հոդվածները, հաղորդումները և այլ նյութեր, որոնք վերաբերում կամ առնչվում են Արցախի կամ նրա առանձին բնակավայրերի ազգագրությանը: Հատկապես կարևորվում են «Всемирный путешественник», «Записки Кавказского отдела императорского русского географического общества» «Кавказский календарь», «Известия Кавказского отдела Императорского Русского географического общества» «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», «Материалы для устройства казенных летних и зимних пастбищ и для изучения скотоводства на Кавказе», «Медицинский сборник», «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», «Труды Кав-

казской шелководственной станции», «Русский инвалид» հանդեսներում հրապարակված նյութերը, որոնք արժեքավոր տեղեկություններ են տալիս նշված ժամանակաշրջանի Արցախի տարբեր գավառների ու գյուղերի, ինչպես նաև Շուշի քաղաքի բնակչության թվի և էթնիկ կազմի, երկրագործության, անասնապահության, մետաքսագործության, զինեգործության, օղեգործության, առևտրի, զանազան արհեստների, ժողովրդական բժշկության, սրբավայրերի, հնությունների, եկեղեցիների, վանքերի, լեռների, գետերի, բուսական ու կենդանական աշխարհի, աշխարհագրական դիրքի, կլիմայի, տարազի, ժողովրդական տոների, ընտանեկան կյանքի, հասարակական դատի ու պատժամիջոցների, տների կառուցվածքի, թաղամասերի, դավանանքի, ամուսնության և հարսանիքի հետ կապված ծիսակատարությունների, սովորությունների, հավատալիքների և նախապաշարմունքների, սննդակարգի, ժողովրդական խաղատեսակների և այլ երևույթների մասին: Առանձին ենթաբաժիններով ներկայացվում են նաև Արցախի բնահյուսության և բարբառի վերաբերյալ հրատարակված նյութերը:

**Վարդանյան Ա, Պարսկերենից փոխառյալ
բառակապակցություններ Ճահուկ-Վայքի միջբարբառում
(հոդված)**

Հոդվածը վերաբերում է պարսկերենից փոխառյալ բառակապակցություններով հարուստ Ճահուկ-Վայքի միջբարբառին: Միջբարբառը հայերենի բարբառային այն միավորներից է, որոնք, թեև Իրանի բուն տարածքի նկատմամբ աշխարհագրորեն գրավել են միջակա դիրք, լեզվական շփումների արդյունքում տարբեր ժամանակաշրջաններում փոխառել են ոչ միայն զգալի բառապաշարային շերտ, այլև բազմաթիվ բառակապակցություններ, որոնք հաճախ ընկալվում են որպես մեկ ամբողջական բառ:

Հայտնի է, որ հայ-իրանական լեզվական առնչությունները սկիզբ են առել դեռևս հազարամյակների խորքից՝ նախահայերենի,

հին պարսկերենի և ավելի վաղ ժամանակաշրջաններից, երբ այդ լեզուներում շատ երևույթներ դեռևս նախնական վիճակում էին սկզբնավորված հնդեվրոպական միասնության միևնույն իրողություններից: Ուստի պատահական չէ, որ հայերենի՝ հին լեզուներից կատարած փոխառությունների գերակշիռ մասը իրանական լեզուներից են:

Պատմական հանգամանքների բերումով հայերենն առավել սերտ շփումներ է ունեցել միջին պարսկերենի և նոր պարսկերենի հետ, և լեզվական շփումների արդյունքում հայոց լեզվում, նրա տարածքային տարբերակներում այսօր առկա են շուրջ հազար հինգ հարյուր իրանական փոխառություններ, ինչպես նաև հայ-իրանական ոչ միայն բառապաշարային, այլև հնչյունական և ձևաբանական ընդհանրություններ:

Հոդվածագիրը նշում է, որ համակեցության պայմաններում պարսկերենի հետ շփումներն այնքան շոշափելի են եղել, և որ Ճահուկ-Վայքի միջբարբառը փոխառել է անգամ պարսկերենի կապերով և շաղկապներով բառակապակցություններ, ինչպես նաև պարսկերենի կաղապարներով բառաբարդումներ:

Վարդանյան Ա., Հայկական Մեծ պահքի պահպանը և շումերական Խումբաբան (հոդված/ռուսերեն)

Հոդվածագիրը նշում է, որ հայկական ժողովրդական օրացույցի ավանդական քրիստոնեական տոներում երբեմն պահպանվել են նաև հազարամյակների խորքից եկող որոշակի հնագույն տարրեր: Դրանք հատկապես ակնհայտ են գարնանային մի շարք ծեսերում, մասնավորապես՝ Ջատկին նախորդող և հաջորդող տոներում:

Ալլատիզը հայկական ժողովրդական հավատալիքներում յուրօրինակ շաբաթացույց-օրացույց է, որի ամենապարզ տարբերակը բաղկացած է տխի գլխիկին ամրացված յոթ փետուրներից:

Զատկին նախորդող յոթշաբաթյա Մեծ պահքի ողջ ընթացքում Ակլատիզը կախված է եղել տան երդիկից, և նրանով վախեցրել են պահքի կանոնները խախտել փորձող երեխաներին:

Միջգիտակարգային բնույթ ունեցող սույն հոդվածում ազգագրական, առասպելաբանական, բանահյուսական, բարբառագիտական նյութերի հիմքով ստուգաբանվել է *խատուտիկ* ծաղկանվան՝ հայերենի որոշ բարբառներում առկա *խըմբաբա* (*խըմբաբաբա*) ձևը:

Հայկական Մեծ պահքի պահապան հրեշի՝ Ակլատիզի և շումերական Խումբաբայի՝ մայրիների անտառի պահապան հրեշի միջև ազգագրական, բանահյուսական և լեզվական նյութերի ընձեռած զուգահեռները վկայում են նախահայերի և շումերների միջև որոշակի պաշտամունքային, ծիսական ընդհանրությունների և արժեքային համակարգերի մասին, որն էլ վկայում է՝ *խատուտիկ* բուսանվան հայկական հնագույն բարբառային տարբերակը՝ *խըմբաբան*, անմիջականորեն առնչվում է շումերական «Գիլգամեշ» էպոսի *Խումբաբա* հրեշի անվանը և լրացնում է հայ-շումերական լեզվական ընդհանրությունների ցանկը:

Վարդանեան Ա., Ճահուկ-Վայքի միջբարբառը վիմագրերում, որմանակարների մակագրություններում եւ ձեռագրերի յիշատակարաններում (հոդված)

Հոդվածագիրն ուսումնասիրել է Վայոց ձորի և հարակից տարածքների միջնադարյան վիմագիր արձանագրությունների, որմանակարների մակագրությունների և ձեռագրերի հիշատակարանների լեզուն: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանցում արտացոլվել են տարածքի խոսվածքների ձևաբանական, հնչյունական և բառապաշարային որոշ հատկանիշներ. փաստ, որը ևս հաստատում է միջբարբառի տեղաբնիկ լինելը:

Բարբառագիտական գրականության մեջ Ճահուկ-Վայքի կամ Վայոց ձորի միջբարբառ է կոչվում Վայոց ձորի և հյուսիսային

Նախիջևանի տասնյակից ավելի տեղաբնիկ բնակավայրերի լեզվական սերտ առնչություն ներկայացնող խոսվածքների ամբողջությունը:

Ըստ ձևաբանական դասակարգման՝ միջբարբառը պատկանում է հայ բարբառների արևելյան խմբակցության «Ում» ճյուղին, ըստ հնչյունաբանական դասակարգման՝ ունի հպական բաղաձայնների երկաստիճան ձայնեղագուրկ համակարգ: Հայ բարբառների ուսումնասիրման բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքի կիրառմամբ՝ հոդվածագիրը պարզում է, որ միջբարբառը միջակա դիրք է գրավում հայ բարբառների արևելյան խմբակցության հյուսիսարևելյան բարբառախմբի Արարատյան և Ջուղայի բարբառների միջև, հատկանիշներով փոքր-ինչ հեռացած է Արցախ-Սյունիքի (Ղարաբաղի) բարբառից:

Ճահուկ-Վայքի միջբարբառի և մերձակա բարբառների միջև աշխարհագրական և լեզվական մերձավորությունները համընկնելու փաստը հաստատում է այս բարբառային միավորի տեղաբնիկ լինելու իրողությունը: Դա է հաստատում նաև սույն ուսումնասիրության արդյունքում վերհանված՝ տարածքի միջնադարյան արձանագրությունների լեզվի և տեղաբնիկ խոսվածքների բարբառային հատկանիշների համեմատությունը:

Վարդանյան Ա., Բառերի իրադրական տարբերակները Ճահուկ-Վայքի միջբարբառում (հոդված)

Հոդվածում քննվում են Ճահուկ-Վայքի միջբարբառում առկա՝ միմյանցից գրեթե իմաստային տարբերություններ չունեցող բառերի բազմաթիվ հնչատարբերակներ, որոնք, կիրառվելով ըստ իրադրության, երբեմն խոսքին հաղորդում են ոճական որոշակի առանձնահատկություն, որոշակի իմաստային նրբերանգ՝ զգացականություն, վերաբերմունք:

Հայտնի է, որ հաղորդակցության ժամանակ կարևոր են խոսքի իրադրությունն ու պայմանները, որոնք էլ ձևավորում են իրա-

դրական ոճը: Դրանցով են պայմանավորված նաև խոսքի կառուցվածքը և ընդհանրապես լեզվական միջոցների, մասնավորապես բառապաշարի ընտրությունը:

Հուզական-զգացական երանգավորում ունեցող բառերը՝ որպես լեզվի համակարգի միավորներ, ակնհայտորեն արտահայտում են համապատասխան իմաստային երանգներ, որոնք ոչ միայն առարկաների, երևույթների, հատկանիշների հասկացություններ են, այլև խոսողի վերաբերմունքը դրանց նկատմամբ:

Բնականաբար, համանման երևույթներ են առկա նաև հայոց լեզվի տարածքային տարբերակներում՝ բարբառներում: Թեև բարբառները շարահյուսական կառուցվածքով ընդհանուր առմամբ համընկնում են ժամանակակից գրական հայերենին՝ դրսևորելով որոշակի յուրահատկություններ, այնուամենայնիվ բարբառներում առկա հնչյունափոխական երևույթները առավել հարուստ են դարձնում բարբառների իրադրական բառային տարբերակները, որոնք տարբեր իրավիճակներում կարող են փոխարինել միմյանց:

Հոդվածում պարզաբանվում են նաև բառային տարբերակների առաջանալու հիմքերը, որոնք առաջին հերթին պայմանավորվում են խոսքի արտաբերման նվազագույն ճիգ գործադրելով և, անշուշտ, բարբառի հնչյունափոխական օրենքներով, ինչպես նաև այլ բարբառներից և լեզուներից կատարված փոխառություններով:

Քումունց Մ., Գորիսի բարբառի տոհմանունները (հոդված)

Հոդվածում հանգամանալից քննվում է Գորիսի բարբառի բառապաշարի տոհմանունների շերտը: Հոդվածագիրը վերլուծում է տոհմանունների կազմավորման սկզբունքները, որոնք հիմնականում ծագում են անձնանուններից, մասնագիտություններից, ինչպես նաև կենդանիների անվանումներից՝ վկայելով տոտեմիզմի մնացուկների պահպանման մասին (օրինակ՝ Իժունց, Խոյլունց, Արջունց): Հոդվածի առանցքային մասը վերաբերում է «Քումունց»

տոհմանվան բազմակողմանի՝ ստուգաբանական և ծագումնաբանական վերլուծությանը: Համադրելով լեզվաբանական տվյալները (հնդեվրոպական *gēu- արմատ, խումիերեն kum) և ժամանակակից գենետիկական (Y-DNA) հետազոտությունների արդյունքները՝ հողվածագիրը հիմնավորում է բնիկ տոհմերի՝ Հայկական լեռնաշխարհում հազարամյակների վաղեմություն ունենալու փաստը:

Դ. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

2025 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. Գրիգորյան Ս.Ս., Հինհայերենյան մի քանի բառերի իմաստափոխության մասին, Մերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 51-58:
2. Թադևոսյան Հ.Ս., Բառիմաստային նոր դրսևորումներ 13-րդ դարի բժշկարաններում, «Հայագիտությունը լեզուների և մշակույթների համատեքստում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, ՄՊԼՀ հրատ., 2025, էջ 143-149:
3. Թադևոսյան Հ.Ս., Բառերի նոր իմաստային կիրառություններ հայ միջնադարյան բժշկարաններում (Գրիգորիս, «Քննութիւն նարդոյ եւ նորին ցաւոց», «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ»), «Լեզու և լեզվաբանություն», 1 (32), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 51-62:
4. Խաչատրյան Վ.Ս., Կարևոր ներդրում Հ. Շիրազի լեզվի բառապաշարի ուսումնասիրության մեջ (գրախոսություն), «Լեզու և լեզվաբանություն», 1 (32), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 96-99:
5. Խաչատրյան Վ.Ս., Բազմիմաստության և համանունության շփոթության հարցի շուրջ, «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 109-121:
6. Հովհաննիսյան Ն.Գ., Բարբառային բառերի հավելումներ «Հանդես բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններում (XIV, XVI, XVIII դարեր), «Լրաբեր հասարակական գիտությունների», 3, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2025, էջ 148-160:

7. Յովհաննիսեան Ն., Նորակազմ բառեր «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններում (ԺԲ.-ԺԴ., ԺԵ., ԺԸ. դարեր), «Հանդէս ամսօրեայ», թիւ 1-12, Վիեննա, 2025, էջ 94-114:
8. Մխիթարյան Գ.Մ., *Կօշիկ, ընծայ, պատարագ* անվանումների իմաստային առնչությունների շուրջ, «Հայագիտությունը լեզուների և մշակույթների համատեքստում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, ՄՊԼՀ հրատ., 2025, էջ 122-127:
9. Միրունյան Տ., «Քերականութիւն է Ը մասանց բանի» (ԺԵ դար). բնույթը և աղբյուրները, «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսում, 2 (33), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 15-25: էջ 26-46:
10. Mkhitaryan G.M., Dilbaryan N.H., Religious Terms in Classical Armenian Based on the Book "Refutation of the Sects" by Yeznik Koghbatsi, Singapore, "Forum for Linguistic Studies." 2025, 7(3), p. 1038–1046.
11. Tadevosyan H.M., Khachatryan V.M., Lexical Analysis of Disease Names Based on Zoonyms in Medieval Armenian Medical Books, Trnava, "Lege artis. Language Yesterday, Today, Tomorrow", vol. X, N 2, p. 149-166.
12. Григорян С.М., Особенности толкования Библии в «Книге вопрошений» Григора Татеваци, «Золотой V век армянской культуры: Достижения. Мировое значение» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, «Ключ-С» հրատ., 2025, с. 298-303.
13. Мхитарян Г.М., Древние музыкальные инструменты в армянском переводе Библии, «Золотой V век армянской культуры: Достижения. Мировое значение» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, «Ключ-С» հրատ., 2025, с. 253-260.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐԵՐ

Գրիգորյան Ս., Հինհայերենյան մի քանի բառերի իմաստափոխության մասին (հոդված)

Հոդվածում ներկայացվում են հինհայերենյան մի շարք բառեր, որոնք արդի հայերենում իմաստափոխված են: Քննվել է բառերի երկու խումբ. ա/ բառեր, որոնք նախնական իմաստը չեն պահպանել, բ/ բառեր, որոնցում նախնական իմաստը մասնակի պահպանված է:

Թաղևոսյան Հ., Բառերի նոր իմաստային կիրառություններ հայ միջնադարյան բժշկարաններում («Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց» (Գրիգորիս), «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ») (հոդված)

Միջնադարյան բժշկարանները կարևոր սկզբնաղբյուր են միջին հայերենի բառապաշարի ուսումնասիրության համար: Բազմաթիվ նորակազմություններից և փոխառություններից բացի՝ բժշկարաններում կան նաև հին հայերեն բառերի (նաև միջինհայերենյան և բարբառային)՝ նոր իմաստներով կիրառություններ: Նպատակ ունենալով բացահայտելու միջին հայերենի շրջանում գործածված իմաստային նոր դրսևորումները և պարզելու դրանց հետագա զարգացման ընթացքը՝ հոդվածում դիտարկվում են նոր բառիմաստներ, որոնք թերևս առաջին անգամ գործածվել են XIII դ. երկու՝ «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց» (Գրիգորիս) և «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ» բժշկարաններում: Շարադրված լինելով միջին հայերեն՝ հիշյալ բժշկարանները երեվան են հանում բառիմաստային ուշագրավ նոր դրսևորումներ: Համագործածական բառերի զգալի մասը գործածվել է բժշկական տերմինի (կազմախոսական բառեր, հիվանդության անվանումներ) նշանակությամբ: Քանի որ նոր բառիմաստների գերակշռող մասն

արձանագրված է «Միջին հայերենի բառարան»-ում հենց քննվող բժշկարանների վկայմամբ, նոր բառիմաստները ներկայացվում են ըստ այդ բառարանում վկայված լինելու՝ առանց իմաստափոխության մեջ ընդունված դասակարգումների: Ըստ այդմ՝ առանձնացվում են քննվող իմաստների երկու խումբ՝ «Միջին հայերենի բառարան»-ում վկայված բառեր և «Միջին հայերենի բառարան»-ում չարձանագրված բառեր:

**Թաղևոսյան Հ., Խաչատրյան Վ., Կենդանանուններով
ախտանունների բառաքննություն միջնադարյան հայկական
բժշկարաններում) (հոդված/անգլերեն)**

Հոդվածում քննվում են միջին հայերենում լեզվական տարբեր օրինաչափություններով ձևավորված կենդանանուններով ախտանունները, որոնք գործածվել են միջնադարյան ութ բժշկարաններում (XII–XVI դարեր) և, ըստ բառարանային տվյալների, գրաբարում չեն վկայվել: Ներկայացվում են այդ ախտանունների ձևավորման հիմնական ուղիները, ինչպես նաև դիտարկվում է դրանց՝ ժամանակակից հայերենին որպես բժշկական տերմին փոխանցվելու կամ նոր համարժեքներով փոխարինվելու հանգամանքը:

Հոդվածագիրը նշում է, որ տասնհինգ տարբեր կենդանիների անվանումների հիման վրա ստեղծվել են գրաբարյան մատենագրության մեջ չվկայված տասնյոթ ախտանուններ, որոնք մատնանշում են մարդուն և կենդանիներին բնորոշ մի շարք հիվանդություններ: Այդ բժշկական տերմինները ձևավորվել են երեք հիմնական ճանապարհով՝ իմաստի պատճենմամբ (հունարեն, արաբերեն իմաստներ), բառակազմական կաղապարի (արաբերենի կենդանանուն + հիվանդություն) պատճենմամբ, և ժողովրդախոսակցական կազմություններ են, որոնք կիրառվել են որպես փոխառված բժշկական տերմինների հայերեն համարժեքներ:

Քննված կենդանանուններով ախտանունների հիմքում, ըստ հոդվածագրի, ընկած են կենդանիներին բնորոշ մի շարք հատկա-

նիշներ՝ արտաքին տեսք, բնորոշ առանձնահատկություններ, տրվյալ կենդանուն հատուկ հիվանդություններ կամ ունակություններ:

Խաչատրյան Վ., Բազմիմաստության և համանունության շփոթության հարցի շուրջ (հոդված)

Հոդվածում քննվում է բառերի բազմիմաստության և համանունությունը շփոթելու հարցը արդի հայ լեզվաբանության մեջ: Նկատվում է, որ համանունությունը մեծ մասամբ առաջանում է բազմիմաստ բառերի իմաստների տրոհումից: Լեզվաբանների մի մասը դրանք համարում է մերձ իմաստներ, մյուսները՝ հեռավոր, ուստի նույն իրողությունը մի դեպքում դիտվում է որպես բազմիմաստություն, մյուս դեպքում՝ համանունություն: Հոդվածի հիմնական նպատակն է հստակեցնել խնդրո առարկա իրողությունների սահմանները: Հետևաբար իմաստային զգալի տարբերություններ ունեցող բազմաթիվ օրինակներ, որոնք մասամբ բնութագրվում են անկախ բառակազմությամբ և քերականական տարբերությամբ, դիտվում են որպես համանուններ, չնայած բառարաններում կամ այլ աշխատություններում ներկայացված են բազմիմաստության տիրույթում: Նշվում է նաև, որ շուրջ կես դար խնդրո առարկային ըստ էության նոր անդրադարձ չի կատարվել, թեև արդի հայերենի բառապաշարում լուրջ տեղաշարժեր են տեղի ունեցել, ձևավորվել են նոր իմաստներ, կազմվել են նոր բառեր, որոնք ևս բազմիմաստության և համանունության տեսանկյուններից պարզաբանման կարիք ունեն, ինչպես վկայում են հոդվածում ներկայացված համապատասխան օրինակները:

Հովհաննիսյան Ն., Բարբառային բառերի հավելումներ «Հանդես Բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններում (XIV, XVI, XVIII դարեր) (հոդված)

«Հանդես Բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններ

րը, ըստ Մատենադարանի ձեռագրացուցակների, թվագրվում են XII դարով, սակայն հավանական է, որ դրանք կազմվել են XI–XII դարերում՝ հաշվի առնելով IX–XI դարերում ստեղծված կրթական կենտրոնների գործունեությունը: Հայտնի է, որ շատ ձեռագրեր ընդօրինակվել են կրթության և գրչության արվեստի կենտրոններում: Գրիչները փորձել են հարազատ մնալ բնօրինակին, քանի որ ձեռագիրը ճշգրիտ ընդօրինակելը չգրված օրենք էր, բայց նրանք դա նաև արել են լեզվի իմացության մակարդակին համապատասխան, և, այդուհանդերձ, չի կարելի բացառել միջավայրի լեզվի ազդեցությունը: Հետևաբար, հավանական է, որ ձեռագրերն ընդօրինակողները բառարաններում ավելացրել կամ ներառել են այնպիսի բառեր, որոնք, իրենց կարծիքով, հեշտությամբ են հիշվում կամ կարող են առավելագույն պատկերացում տալ որևէ երևույթի, գործողության, բնութագրի մասին, կամ էլ պարզապես հավելել և լրացրել են իրենց իմացածը: Հոդվածում քննվում են բարբառային բառեր, որոնք ներառվել են XII դարից հետո վկայվող ձեռագրերում: Բառարանային տվյալների վերլուծությամբ փորձ է արվում արձանագրելու, որ կա՞մ բարբառային բառերն ավելացրած ընդօրինակողը պատկանել է որոշակի բարբառ ներկայացնող տարածքի, կա՞մ ձեռագիրն ընդօրինակվել է այդ տարածքում:

Յովհաննիսեան Ն., Նորակազմ բառեր «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններում (ԺԲ.-ԺԴ., ԺԵ., ԺԸ. դարեր) (հոդված)

Գրաբարի եւ միջին գրական հայերենի բառապաշարային տարբերությունների գլխաւոր աղբիւրները, ինչպէս իրավացիօրէն նկատուել է, նաեւ բառային նորաբանութիւններն են: «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանները հետազօտողները հաւաստել են, որ դրանց մանրագնին ուսումնասիրութիւնը ի յայտ կբերի բաւական նոր բառեր, որոնք ժամանակին գործածական են եղել մեր գրականութեան ու ժողովրդական խօսուածքի մէջ: Արձանագրուել է, որ այդպիսի բառեր գործածուել են ժամանակի

համար նորաստեղծ, այսօր մեզ անյայտ երկերում, կամ էլ դրանք կերտել են քանարուեստի ուսուցիչները, ճարտասանները եւ այլք: Ցանկացած ժամանակաշրջանի գրական լեզու իր բառային կազմում ունի նաեւ նորակերտ բառեր, որոնք ուսուցողական եւ այլ նպատակներով պետք է որ արտացոլուած լինեն տուեալ շրջանում կազմուած բառարաններում: Նշուել է նաեւ, որ միջին հայերէն գրուած բնագրերում ավելի շատ են նորաբնոյթ կամ նորակազմ հոմանիշ բառեր: Ասուածն անվերապահօրէն վերագրելի է նաեւ հոմանիշների՝ ԺԲ.-ԺԸ. դարերից աւանդուած ձեռագիր բառարանների, որոնցում առկայ, բայց գրաբարի տպագիր բառարաններում չարձանագրուած բառերը կարելի է նորակազմութիւններ դիտել: Եւ քանի որ այս ձեռագիր բառարանները չունեն բնագրային վկայութիւններ, հետեւաբար փորձ է արուում այդ բառերի գոյութիւնը հաստատելու հայերէնի բառակազմութեան առանձնահատկութիւններով, հետագայում լոյս տեսած բառարաններով, հնարաւորութեան դէպքում՝ նաեւ բնագրային օրինակներով:

**Մխիթարյան Գ., Դիլբարյան Ն., Կրօնական եզրույթները
դասական գրաբարում ըստ Եզնիկ Կողբացու
«Եղծ աղանդոց» երկի (հոդված/անգլերեն)**

Կրօնի և հավատալիքների իմաստային դաշտը կազմված է վաղնջական ծագում ունեցող միջուկային բառերից, որոնք, որպէս կանոն, բնիկ ծագում ունեն և արմատական բառային միավորներ են, որոնցից ածանցման և բառաբարդման միջոցով հետագայում առաջանում են նոր հասկացություն-անվանումներ: Հոդվածագիրները նշում են, որ բառերի բնութագրումը կարևոր է ոչ միայն դասական լեզվաբանության տեսանկյունից, այլև նոր լեզվաբանական գիտակարգերի հայեցակետերից, ինչպիսիք են հոգելեզվաբանությունը և հանրալեզվաբանությունը: Դասական գրաբարի հավատալիքային դաշտի բառանունների վերլուծությունը թույլ է տալիս վերականգնել նախալեզվի համարժեք բա-

ռաշերտերը, որոնք լեզվականի հետ մեկտեղ նաև քաղաքակրթական մեծ արժեք ունեն, քանի որ բացահայտում են հնդեվրոպական ժողովուրդների աշխարհընկալման յուրահատկությունները, հոգևոր և նյութական մշակույթների հարաբերությունները:

**Միրունյան Տ., «Քերականություն է Շ մասանց բանի» (ԺԷ դար).
բնույթը և աղբյուրները (հոդված)**

Քերականական գրուցարանը (քերականական կատեխեզիս) հայերենի քերականության պատմության մեջ հայտնի ժանրային ձև է, այդպիսի գործեր պարունակող հայտնի ձեռագրերը թվագրվում են ԺԴ-ԺԹ դարերով:

Այս ժանրի՝ ծավալով փոքր գործերը, այսպես կոչված, մանրը քերականությունները հազվադեպ են դարձել քննության առարկա, նաև՝ ոչ միշտ է խնդիր դրվել դրանց ամբողջական ուսումնասիրության: «Քերականություն է Շ. մասանց բանի» վերնագրով գրուցարանի ուսումնասիրությունը Գևորգ Չախուկյանը սահմանափակել է մի քանի խոսքի մասերի նկարագրությամբ, ընդ որում՝ նկատի է առել ընտրովի հատկանիշներ, որոնք քննել է մեկ այլ կատեխեզիսի համեմատությամբ: Հոդվածագիրը փորձել է հնարավորինս սպառնիչ նկարագրել այս քերականության բնույթը և հիմքում եղած աղբյուրները՝ նպատակ ունենալով որոշակի օրինակով ընդարձակել այդ քերականական ժանրի ճանաչողությունը:

ENGLISH AND FRENCH SUMMARIES*

PROBLEMS OF STUDY AND REGULATION OF MODERN EASTERN AND WESTERN ARMENIAN

Arakelyan K., Neologisms in Modern Armenian Poetry.-Neologisms are an inexhaustible source of vocabulary enrichment, the study of which is extremely important in terms of forming an accurate and complete picture of a given stage of the language. Authorial neologisms, including poetic words in verse speech, have their own place in the classification of these units. Armenian poets have always enriched the vocabulary of the native language with new and beautiful words, and modern poets are no exception. The article aims to present a certain picture of neologisms and word-creation tendencies in modern Armenian poetry. An examination of the material provided by the New Words Collection compiled by the Department of Lexicography of the Institute of Linguistics of the NAS RA shows that the overwhelming majority of poetic words created today are complex in structure, more precisely real complexity with articulation, and are adjectives in part of speech, there are fewer nouns, much less verbs and adverbs. A significant part of neologisms enriches the literary language, and some enter as incidental and do not pass into the active layer of the vocabulary.

Arakelyan K., Artistic Image of Water and Irrigation in the Language of Misak Metsarents.- Water is one of the most essential components for life. Throughout its history, mankind has dealt with water use problems, one of which is soil irrigation. These important realities have always been reflected in speech, including artistic speech. The prominent poet Misak Metsarents of the early 20th century also touched upon the depiction of water and irrigation in both verse and prose works. The noun water, the words formed by this root have a great stylistic role and weight in Metsarents' lyric poetry. In case of nominative or metaphorical use, these

* Reprinted from relevant scientific journals.

units gave the speech expressiveness, lyricism, emotionality, endowed it with other virtues.

Asoyan T., Papikyan S., verbal aggression in armenian and russian mass media.- Aggression is one of the most complex and difficult -to-explain aspects of human behavior, drawing the attention of psychologists, sociologists, doctors, 358 cultural scholars, historians, and linguists. Linguists, in particular, focus on the forms and methods of expressing aggression. In the post -Soviet period, the language of mass media in the Russian Federation and the Republic of Armenia has undergone significant transformations: the previously balanced and standardized language, almost identical across publications, gave way to emotional and situational speech tailored to the demands of the moment.

The primary aim of mass media is to influence society through the information they disseminate, often targeted at achieving specific objectives. To some extent , mass media shape the mentality of the society. Various tools are employed to this end, including verbal aggression, which encompasses political, psychological, and social dimensions. In public texts, aggression functions as a means of manipulation - a characteristic form of human behavior in which an individual seeks to persuade or prompt another to act in their own interest. Verbal aggression and verbal manipulation are closely interrelated: verbal aggression constitutes a form of manipulation capable of directing society in a particular direction while exerting emotional influence on its psychological state.

Asoyan T., On lexicographical activity of the mkhitarians.- The article evaluates the role of the Mekhitarists in the development of Armenian culture. It is presented that they conducted numerous studies in the fields of Armenian and world history, geography, botany, medicine, languages, and other sciences, made translations of works by ancient and European writers. They opened schools and taught various subjects, wrote textbooks. However, the Mekhitarists' activities were more effective in the field of Armenology, particularly the study of the Armenian language. They were engaged in the development of a new literary Armenian, wrote grammars of Grabar, freeing Grabar from the influence of Latin. Their contribution to the

development of new Armenian lexicography is great. Bilingual and multilingual dictionaries were especially important, which contributed to the learning of foreign languages.

Barseghyan A., Manifestations of types of syntactic connections (coordination, adjacency) in modern fiction.- The article examines the types of manifestations of syntactic connections (in this particular case, the connection between subject and predicate, agreement and adjacency) in modern literary prose. Study of the actual rich material showed:

(a) The coordination of the manifestations of syntactic types of combinations mainly corresponds to the laws of the Armenian literary language.

(b) The adjacency of manifestations of syntactic types of combination in some cases does not correspond to the laws of the Armenian literary language. This is due to the need for stylization.

Barseghyan A., General characteristics of types of communication management in modern prose.- The article discusses the general characteristics of types of communication management in the modern literary prose. The study of rich factual material has shown:

a) Manifestations of case additions in the management of syntactic connections, in some cases do not correspond to the laws of the Armenian literary language.

b) Manifestations of case and prepositional additions, in the management of syntactic relations, in some cases also do not correspond to the law of the Armenian literary language.

Felekyan M., Negatives or Negative Definitions in Dictionaries of the Armenian language.- The role of linguistic or philological dictionaries is very important for vocabulary study. The lexico-semantic system of vocabulary is represented to varying degrees and with varying accuracy in explanatory dictionaries. The primary method of dictionary explanation is descriptive or logical explanation (explanation proper). However, when explaining words, sometimes it is more useful to list the characteristics that the object (phenomenon, property, action, etc.) expressed by the word does not possess. The absence of a feature can also somehow identify an object. Negative definitions are used primarily for adjectives formed with negative prefixes, as well as for some verbs and nouns. The primary meaning of

words of this type is to indicate the absence of a certain characteristic. A variation of negative explanation is explanation through antonyms.

Negative explanations of words are often not used independently, but rather as a complement to other interpretations.

Felekyan M., Demotivational Meaning of Words in the Armenian Language.- During the historical development of a language, the semantic structure of a compound word can change, which can lead to a blurring of the word's complex structure, even to its loss. This phenomenon is called demotivation.

The formation of the meaning of a compound word is based on its internal form and its motivation. The internal form of a compound word can be very clear and easily understood by native speakers of a given language. This is true for the vast majority of compound words. However, under certain conditions, language tends to obscure and lose both the word-formation and semantic connections within a compound word. Sometimes, the internal form is virtually lost, resulting in a loss of understanding of the compound nature of the word.

This article examines the main reasons and stages of demotivation of the meaning of words in the Armenian language.

Fishenkjian A., Fundamental questions of western armenian teaching climate/method and prospects for succes.- Western Armenian is one of the two branches of modern Armenian and was the spoken and written language of the majority of Diaspora Armenians until the 1980s and 1990s.

The political and interstate struggles in the Middle East at the end of the 20th century resulted in the dilution of the classical diaspora. This piece emphasizes the learning methods adopted by Western Armenians, the problems stemming from them, and the prospects for overcoming these issues. Choosing appropriate teaching methods is crucial for delivering educational content and achieving educational goals. These methods are interconnected with many problems and goals that can only be addressed through a specially programmed and organized learning process.

In order to address issues arising in the region and create necessary textbooks for diaspora schools, it's important to review existing textbooks and consolidate scientific and pedagogical resources to resolve printing problems.

Additionally, applying the latest technical knowledge for the dissemination and teaching of Western Armenian is crucial. This involves preparing and distributing electronic textbooks, CDs, and video clips, and developing and implementing remote, long-distance, and mobile phone training programs for Western Armenian.

Fishenkjian A., The Basic Issues of the Problem of Intergrative Verbs in Armenian (Eastern Armenian-Western Armenian).- The languages differ from each other in lexical, grammatical, and syntactic features. The two manifestations of literary Armenian also have their own grammatical and syntactic features. Historically, both literary ones have had and have morphological differences and similarities. Armenian in its two manifestations has been subjected to a comparative morphological-syntactic examination by philologists. Being the native language of the Armenian Diaspora, Western Armenian has never received scientific and institutional recognition, which is why today it is forced to face a number of problems, with the issue of governance considered the most important. The article presents the types of verb gender in Armenian, especially Western Armenian, according to the works of Diaspora and native philologists, and the inflected word they require in the construction of sentences. The study examines the shifts of Armenian intransitive verbs in grammar. It examines and conducts a comparative study of the grammatical rules of the Western and Eastern Armenian languages. The research concludes that the inflection of the active verb, or direct object, differs between Eastern Armenian (dative for the person and direct for the object) and Western Armenian (accusative for the person and object). In addition, it notes shifts by studying the dictionaries and spoken language of Western Armenian. Scientifically, the active verb of Western Armenian, with its semantic difference, can demand its object /the word in question/ in the dative, in the ablative, instrumental cases.

Fishenkjian A., Western Armenian in the Armenian Republic (21st century).-In the years that followed the atrocities (Years following the Genocide) together with the unfortunate Armenian people, the Western Armenian too was dispersed to the world's different continents and got affected by that country's language. It didn't have a coordinating body, a commission for maintaining and protecting, so that it would be able to bring

together, to study the Western Armenian language's peculiarities and to get it to a scientific level. Native scholars studying basic educational problems in the diaspora communities, for preserving the Western Armenian had formerly noticed the existing hard conditions. Therefore, they understood that the fundamental center for keeping the Western Armenians alive remains Armenia. This article represents the work done by the Armenian higher institutions and governmental agencies over the last two decennials in maintaining and protecting, the fatherland-diaspora conferences, monography, articles, symposiums, scholarly undertakings, publications, and teachings. Nevertheless, the main problem of teaching Western Armenian in the Armenian Republic's educational institutions is the necessity of ingenious, expertly specialist pedagogues.

Ghazaryan H., Intonation and segmentation as means of distinguishing syntactically ambiguous structures.-The article examines those syntactically ambiguous structures in Modern Armenian that possess the same lexical composition, but whose differentiation and clarification of meaning in oral speech are significantly influenced by intonation-specially grammatically meaningful pauses-while in written speech, by various marks of segmentation. The reason is that speech is highly diverse and multifaceted in its objective and attitudinal aspects, and the objective regularities of speech construction often intersect with the speaker's attitude and logic. This, in turn, becomes the basis for perceiving and punctuating the same syntactic structures differently.

The aim of the study is to demonstrate, through the example of ambiguous structures, that in punctuating written speech, it is necessary to take into account not only intonational, but also syntactic and semantic factors, which often co-exist within the same phenomenon and, from different perspectives, reveal, complete, and supplement each other.

Guided by this principle and employing a descriptive-analytical method, the study concludes that in Modern Armenian, distinctive intonation and corresponding segmentation marks at the syntactic level, especially in sentences with homogeneous components, can differentiate:

- a) sentence members and their complemental-grammatical relations;
- b) simple and compound sentences;
- c) grammatical relations of components within compound sentences connected by coordination;

d) methods of connecting components in complex subordinate sentences.

The article examines each of these issues separately. It is noted that the application of each segmentation mark in written speech has grammatical and stylistic justification in oral speech. It is also emphasized that in the case of ambiguous structures, the semantic and stylistic nuances of oral speech should be taken into account as fully as possible in written speech.

Ghazaryan H., Polysemous Secondary Formants in Modern Armenian.-Linguistic polysemy is associated with the formal-semantic relations of units at different language levels and is manifested at all levels that carry meaning-formational, lexical, morphological, and syntactic. Since the shifts in meaning and value of linguistic units are not phenomena specific to a single stage of the language, but rather reflect the general process of the internal development of the language, their study is important and relevant at all periods.

This article discusses those secondary formants in modern linguistic thinking that have undergone partial semantic shifts, and, having experienced semantic change, in addition to their main function, also appear in a different usage, thus acquiring a specific meaning in this secondary function. The secondary formants under discussion include plural-forming suffixes (–նէր, –իկ), declensional formants (–ի, –յաւն, –նլ), articles (–ը/ն, –ս, –ն), participial endings (–ել, –ալ, –ած, –ող), word-formative suffixes (–լ, –ցն, –աւն, –ելն, –ն, –չ), and the connective formant (-ս-).

The article emphasizes that there are polysemous secondary formants that either combine different meanings within the same word or express semantic differentiation in various words. It is also noted that polysemous formants may sometimes be distinguished outside of speech, and sometimes only in actual usage.

Ghamoyan L., The Concept of “Dance” and Its Word-forming Features in Literary Armenian Language. – This paper is an in-depth and detailed study covering the etymological and semantic features of the root “dance” in different periods of the Armenian language development, as well as the expression of its word-formation possibilities in the literary language. The study is conducted in two directions: diachronic analysis, which examines the semantic evolution of the notion of “dance”; and synchronic analysis of the parsing of compound words with this root. Special attention is paid to

the nuances of the meaning of the root “dance”, its polysemy and semantic changes. Also neologisms containing the root “dance” are highlighted, which is important from the point of view of studying the lexical composition of the Armenian language.

Ghamoyan L., Morphological and Semantic Features of the Root “խաղ”.- This article examines the etymology of the root ‘խաղ [khagh] (game)’ and its semantic complexity in the Armenian language. It is noted that the root has more than two dozen meanings, which are also reflected in the word formation system. Both derivative and complex and compound words are formed from the root ‘խաղ’, resulting in the emergence of synonymous and antonymous series, homonyms and word forms in the Armenian language. The root ‘խաղ’ has also contributed to the emergence of unambiguous and polysemous words, and the use of this root in phraseological units and proverbs reflects its expressive power and linguistic-functional role. The study shows that the root ‘խաղ’ in the Armenian lexicon contributes to the semantic enrichment of the language and the expansion of its expressive possibilities.

Margaryan L., Principles of naming oykonyms in artsakh and classification of their semantic fields.- The historical development of Artsakh's toponymic system is divided into five main periods, spanning from ancient times to the era of independence. This study examines the list of oykonyms from the period of independence of the unrecognized Nagorno-Karabakh Republic (1991–2020). This list serves, on the one hand, as a condensed representation of the evolution of Artsakh's toponymic system, and on the other, as a comprehensive reflection of the patterns operating within this system.

According to the findings, two main principles of naming settlements are identified within Artsakh's toponymic system:

1. The expression of natural conditions and geographical realities.
2. The reflection of socio-economic conditions.

1. Across all historical periods, the phenomenon of expressing natural conditions and geographical realities consistently operated in Artsakh's toponymic system. By classifying them into semantic fields, the study explores natural oykonyms that incorporate terms related to gorge, district,

stone, mountain, barn, soil, water, spring, river, place, tree/bush/wooded area.

2. Oykonyms based on socio-economic realities are classified as monument-toponyms. These are categorized into three semantic fields:

a) oykonyms derived from personal names,

b) oykonyms reflecting socio-economic phenomena and political realities,

c) oykonyms created by combining geographical descriptions and ideological foundations.

A separate group includes oykonyms that, although composed of geographical markers, are incidental names.

The analysis also highlights the role of naming phenomena in the context of changes in Artsakh's administrative-territorial structure, particularly in terms of the elimination of substrate elements and the restoration of ancient Armenian toponyms.

In the concluding part of the study, the naming traditions of neighboring regions – Russian, Persian, and Turkish – are compared in an overview, noting the existence of general toponymic patterns as well as the historical, social, and cultural conditions that guide the naming process.

This research confirms that Artsakh's toponymic system is an integral part of the Armenian toponymic system, and its naming processes reflect not only the region's historical and linguistic characteristics but also its cultural and political distinctiveness.

Margaryan L., The semantic and word-formational function of the suffixes -kert, -stan, and -avan in the toponymy of Artsakh.- The toponymic inventory of Artsakh contains a significant number of hybrid toponyms, among which those formed with Iranian-origin suffixes comprise a considerable part. The analysis of these toponyms reveals, on the one hand, the outcomes of semantic development of both native and borrowed elements, as well as the functional value of pre-toponymic and toponymic meanings; on the other hand, it demonstrates their reinterpretation within the Armenian language, highlighting the role of toponymy as a carrier of linguistic and cultural memory.

The subject of the study is toponyms formed with the Iranian suffixes -kert and -stan. Also considered are toponyms with the -avan suffix, whose etymological origin is attributed either to the Iranian or Urartian languages.

The suffix -kert in Armenian functions as an active toponymic word-forming element, expressing ideas of creation, construction, or foundation. In the toponymy of Artsakh, this suffix is preserved both in historical and newly-established settlement names: Tigranakert, Dastakert, Drnakert, Martakert, Stepanakert, Yervandakert, etc.

The suffix -stan denotes a place, territory, or country and, in Armenian, often also expresses plurality or collectivity. In the toponymic system of Artsakh, this suffix is found in such names as Aygestan (three settlements), Khndzristan, and Gyulistan.

The -avan suffix in Armenian is used both as an independent root denoting a settlement and as a word-forming element. During the Soviet era, in the toponymic system of Artsakh, -avan served as an intermediate unit between the designations of village and town, referring to larger settlements with a semi-urban character, while in compound formations -avan acts as a toponymic forming suffix. Notably, before the establishment of Soviet rule, there were almost no toponyms with the -avan suffix in Artsakh (with the exception of Margushevan, formed from Margusha+avan, named after the daughter of Avan Yuzbashi). The word-forming function of -avan became particularly active during the Soviet and post-Soviet periods, with 15 such toponyms recorded in the independence period: Armenakavan, Hovsepavan, Azatavan, Haykavan, Getavan, Khnkavan, Karmiravan, Hacavan, Kajavan, Knaravan, Kirsavan, Midjnavan, Vurgavan, Tigranavan, and others.

The toponyms of Artsakh are a distinctive reflection of various historical layers, demonstrating the processes of linguistic and cultural contacts, borrowings, and their localization. These toponyms not only indicate the historical processes and the resulting linguistic developments but also confirm the continuity and originality of the Armenian tradition of toponymic formation.

Margaryan L., An analysis of the place names of artsakh ending in the final sound "-i". - The article examines the semantic-functional value of the final sound *-i* in the oykononyms of Artsakh.

In this article, oykononyms ending in "-i" are classified into three groups:

1. Morphological "-i" forms with phonetic changes. This group includes names where the "-i" suffix undergoes phonetic transformations in dialects, such as Hatsi/Hats'e, Hagorti/Heghorte, Krasni/Krasne.

2. Morphological "-i" forms without phonetic changes. This group encompasses names where the "-i" suffix remains unchanged in dialects. Examples include Gishi, Nngi, Shushi.

3. Root or semantically neutral forms. This category includes names where the "-i" suffix lacks morphological value, such as Yeghtsi (a dialectal form of the word "church"), Jivani (a newly established settlement named after ashugh Jivan), and Msheni (the final sound of the suffix "-eni"). It is noted that oykonyms ending in "-i" are often located in geographically adjacent areas, suggesting they may reflect certain territorial integrity and topographic features. Examples include Gishi, Nngi, Kagharci, and Hagorti.

The article also briefly compares Artsakh's toponymic system with similar names in the Republic of Armenia (RA).

Margaryan L., Word-formation models of Artsakh toponym.- The study of the word-formation models of the toponyms of Artsakh is one of the means to reveal the peculiarities of the toponymic system. The identification of the word-formation groups of Artsakh's toponyms is based on the classical and modern principles of toponymic word-formation classification, in particular on Jahukyan's approach (with some specific modifications).

According to their structure, Artsakh's toponyms are grouped into:
Simple or root toponyms.

These can be classified as:

- a) genuine root toponyms, when the word root is the toponym itself;
- b) toponymic roots, i.e., names that are conceived and perceived as root toponyms.

Toponymic roots are classified into:

- a) toponymic root: a root unit derived from another name (e.g., Arakel, Rev);
- b) toponymic root: a compound word whose pre-toponymic meaning is obscured and is perceived as a primary, root toponym (e.g., Shushi, Gishi, Hadrut);
- c) toponymic root: a compound word with a still-perceived pre-toponymic meaning, but which is not a result of toponymic word-formation,

instead being incorporated as a ready-made compound word into the toponymic system (e.g., Martuni, Shahumyan).

Compound toponyms include the following submodels:

A) Compound toponyms are grouped as toponymic phrases or syntactic compounds and morphological compounds (agglutinative and compositional).

B) Affixed toponyms. There are no prefixal formations in the toponymic system of Artsakh, whereas suffixal formations have gained quantitative prevalence over root and compound structures over time. Native Armenian toponymic suffixes include: -i, -ut/ot, -k, and the functionally equivalent -er; borrowed suffixes in Artsakh's toponymic word-formation are numerous: -anda, -apat, -kert, -stan, -shat, -shen, -ik, -uk, -avan, etc.

The analysis shows that in the toponymic system of Artsakh, simple root toponyms are few and are no longer replenished. Compound formations constitute the main core and demonstrate a trend of growth in the toponymic creation process. It is notable that the word-formation structure of toponyms also reflects historical-political circumstances: each morphemic element bears witness to the linguistic and cultural realities of the corresponding period. Although the presented classification method is not new in itself, its application to new material ensures that the results are comparable with existing data in toponymy, enriching them with new submodels.

